№ 278 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 278

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և
7 ամսվանը 6 ռուբլի:
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը:

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE
VENISE S. LAZARE

16.12.15

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԱՌԱՋԻԿԱՅ 1916 Թ. ՀԱՄԱՐ

(45-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը 10 ռուբ.	10 ամիսը 9 ռուբ.	9 ամիսը 8 ռուբ.	8 ամիսը 7 ռուբ.	7 և 6 ամիսը 6 ռուբ.	Այնուհետեւ ամսական ՄԷԿ ռուբլի:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 12 ռուբլի:

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով: Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ:

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամականիշ:

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱԶԴ

Ի տեղեկութիւն այն անձանց, որոնք, համաձայն կոչի

Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանուհի

ՏԱՏԻԱՆԱ ՆԻԿՈԼԱՅԵՎՆԱՅԻ,

կը կամենան նուիրել ընծաներ «Քսակների մէջ» կովկասեան զօրքի զինուորականներին, յայտնվում է, որ, ինչպէս տեղեկացնում են, արդէն ընծաներ ստացող զինուորականները, «Քսակների մէջ» դրված սապոնը հաղորդում է իր հոտը ծխախոտին, ուստի ցանկալի է, որ պատրաստ «Քսակներ» նուիրող անձինք այլևս նրանց մէջ սապոն չը դնեն, այլ նրա փոխարէն դնեն մի այլ առարկայ:

առ. 926. 2—1 Փոխարքայի գլխաւորատան վերատեսուչ Իստոմին

Հ. ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՆ

սրանով յայտնում է, որ պ. Մ. Շաթիրեանի ծախքով Ազգային Բիւրոյի հրատարակութեամբ լոյս տեսաւ „ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԱԼԲՈՄԸ“, որի ամբողջ եկամուտը յատկացված է ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԻՆ: Ալբոմների պահեստը գտնվում է Բիւրոյի գրասենեակում (Лермонтовская, 12), որտեղ կարող են դիմել գնել ցանկացողները: Գինն է 5 ռուբլի, ճանապարհածախքով 5 ր. 50 կ.:

ԿՈՉ

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ“, ստանալով Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի օրհնութիւնը և հաճութիւնը ու պաշտօնական իշխանութեան թոյլտւութիւնը, իրան նպատակ դրած լինելով ըստ առաջին հերթի նպաստել Վասպուրական նահանգի վերաշինութեան գործին և հայ կամաւորական միլիցիայի պահպանութեան, որ պէտք է պաշտպանէ տեղական ժողովուրդը աւարառութիւններից և աւազակութիւններից,—սրանով կոչ է անում հայ գիտակից և հայրենասէր հասարակութեանը՝ աջակցել իրան՝ գլուխ բերելու այդ կարեւոր և շինարար գործը:

Թող այս անգամ ևս, ինչպէս և միշտ, հայ ունեւորի ռուբլիներին միանան և չատանման հայ ժողովրդի լումաները և թող այս շինարար գործը նկատվելով ժողովրդական՝ հայ ժողովրդի ամեն մի անհատ չը խնայէ իր փոքրիկ լուման ձգելու ազգային այդ շինարար գանձանակի մէջ:

Դրամական նուէրները կարելի է ուղարկել կամ ուղղակի Յանձնաժողովի նախագահ Դաւիթ-խան Աւան-Իւզբաշեանի հասցէով (Тифлисъ, ул. Петра-Великаго, собст. домъ, Давиду Богдановичу Аван-Юзбашеву Хану Сакнакскому), կամ գանձապահ Ալ. Մելիք-Ազարեանցի (Тифлисъ, Лермонтовская ул. соб. домъ) և կամ «Մշակի» միջոցով:

Նախագահ Յանձնաժողովի՝ Դաւիթ-խան Աւան-Իւզբաշեան
Փոխ-նախագահներ՝ Հ. Առաքելեան, բժշկ. Բ. Նաւասարդեան
Անդամ-գանձապահ՝ Ալ. Մելիք-Ազարեան
Անդամներ՝ Միք. Արամեան, Յ. Պաւրեան, Միք. Աթաբէկեան, Խաչ. Խաչատրեան, Ստեփան Սուլխանեան, Աւետիք Եզեկեան, Ստ. Մալխասեան (քարտուղար), Մ. Մինասեան:

(օ. մ.) առ. 915. 10—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՁԻԹԵՆԻ

ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՅՕԳՈՒՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ

Ժողովածուին մասնակցել են մօտ 50 հայ գրականագէտներ:

Գինն է 2 ռուբլի Թիֆլիսում: Օտար տեղերի համար ճանապարհածախսով—2 ր. 50 կ.: Վերադիր վճարով ոչ ոքի չի ուղարկվում:

Պահեստը գտնվում է Նպաստամատոյց Ընկերութեան գրասենեակում, ուր և պէտք է դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Обществу Вспомоществованія на случай бѣдствій «НПАСТАМАТУЙЦЪ». Соломоновская, 21.

«ՁԻԹԵՆԻՆ» վաճառվում է նաև Թիֆլիսի բոլոր հայ գրախանութներում:

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ՔԵՈՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն: Ատամի հեռացումը առանց ցաւի: Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով: Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պերէուլկից:

(տ. օ.) առ. 515. 100—94

ԲԺԻՇԿ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով:
Առաւօտեան ժամը 10—12-ը:
Երեկոյեան » 5—7-ը:
Бебутовская ул. № 26. 3 րդ օրիորդաց գիմնազիայի կողքին:

առ. 779. 50—40

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօզնէրի: Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի եւ կաշուի հիւանդութիւններով՝ առաւ. ժամը 10—12, երեկ. ժամը 4—6 Սոլոլակ, Բոլնիչնայա փող. սեփ. տուն, № 1, Երկնաշէջնների բնակարանի դիմացը, [illegible]

առ. (չ. ու. կ.) 806. 50—17

Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՈՐԱՔՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան: ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская, 23. тел. 7-92.

առ. (ա. օ.) 896. 100—9

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր

ԲԺՇԿՈՒՀԻ

ՍՕՖԻԱ ՄԻՐԶՈՅԵԱՆ

ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը: Սերգիէեվսկայա փող. № 1. Տէլէֆոն № 16—67:

առ. 753. 50—46

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մօտենում են տօները, և արդէն ամեն կողմից դիմումներ են լինում խմբագրութեանս՝ օգնութեան համար:

Ոչ միայն փախստականները, այլ և տեղական հայ ժողովրդի մէջ բազմաթիւ չքաւորներ կան, մանաւանդ գաւառներից եկած, որոնք քաշվում են դիմել բարեգործական հաստատութիւններին, այլ դիմում են խմբագրութեանս, ուր չը կան որոշ ձևականութիւններ: Այդ հանգամանքը ստիպում է մեզ այժմ, ինչպէս և միշտ արել ենք, դիմել հասարակութեանը և խնդրել չը մոռանալ տօների առիթով չքաւորներին և տնանկներին, որպէս զի խմբագրութիւնն ևս հնարաւորութիւն ունենայ գոնէ որոշ չափով գոհացում տալ կարօտեալներին:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թէ ներքին գործերի մինիստր Խվօստովը և թէ կովկասեան բարձր իշխանութիւնը հնարաւոր են գտել թոյլատրել՝ գումարել Պետրոգրադում ժողով հայկական ամեն հիմնարկութիւնների և մարմինների ներկայացուցիչներից, որոնք մինչև այսօր զբաղվել են հայ փախստականներին օգնելու գործով:

Մեր երկրում մօտ 200,000 հայ փախստականներ են պատսպարված. Նրանց մասին հոգացող շատ մարմիններ և կազմակերպութիւններ կան: Վերջերս գլխաւոր հոգսը նրանց մասին ստանձնել է կառավարութիւնը, համարելով փախստականներին օգնելու գործը պետական անհրաժեշտութիւն: Սակայն փախստականների դրութեան բարւոքումը դեռ շատ հեռու է նախանձելի լինելուց, որովհետև կառավարութիւնը և նրա լիազօրները միայնակ անկարող են մանել փախստականների դրութեան բոլոր մանրամասնութիւններն ուսումնասիրելու, նրանց կարիքներին գոհացում տալու, եթէ այդ գործի մէջ նրանց աջակցութիւն ցոյց չը տան հայկական բոլոր այն մարմինները, որոնք զբաղված են եղել և են այժմ ևս փախստականներին օգնելու գործով:

Այդ մարմինները և կազմակերպութիւնները արդէն բաւական մեծ փորձառութիւն են ձեռք բերել, ունեն տեղեկութիւններ փախստականների զանազան շրջանների մասին. հետևաբար կայ արդէն առատ նիւթ և ուսումնասիրութիւն, որոնց հիման վրա կարելի է գալ որոշ եզրակացութեան, թէ որն է լինելու օգնութեան նպատակայարմար և բացիոնալ եղանակը, և հաղորդել այդ եղանակը կառավարութեան լիազօրներին:

Իսկ որպէսզի մշակվի օգնութեան վերջնական ծրագիրը՝ անհրաժեշտ է կայացնել համագումար բոլոր կազմակերպութիւնների ներկայացուցիչներից և ապա ընտրել մի կենտրոնական, հեղինակաւոր մարմին կամ յանձնաժողով, որ կը ճանաչվի և կենտրոնական կառավարութիւնից, և այդ կենտրոնական, հեղինակաւոր մարմինը կը լինի միակը, որ աջակից կը հանդիսանայ կառավարութեան և նրա հետ միասին կը վարէ օգնութեան գործը:

Ի հարկէ, կարող է հարց ծագել այն մասին, որ եթէ կենտրոնական մարմին ճանաչվի գոյութիւն ունեցող յանձնաժողովներից մէկը, կամ Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտէտը, կամ Էջմիածնի Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովը, կամ Նպաստամատոյց Ընկերութիւնը և կամ կազմվի մի նոր մարմին բոլոր այդ հաստատութիւնների ներկայացուցիչներից: Այդ արդէն համագումարի գործը կը լինի՝ որոշել ինչպէս վարվել:

Ողջունելով համագումարի գումարման միտքը, մենք միայն մի ցանկութիւն կը յայտնենք, որ նա չը հետևի այն եղանակին և մէթօդին, որին հետևեց Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտէտը, որի կազմը կախված էր լինում այս և այն նախագահի անձնական քմահաճոյքից և որն, այդ պատճառով, չը կարողացաւ իրական հեղինակութիւն ձեռք բերել:

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 դեկտեմբերի

ԼՈՆԴՈՆ.—Մամուլի բիւրօն յայտնում է.

Զուտ յերիւրանք է թիւրքական այն տեղեկութիւնը, թէ իբր Տիգրիս գետի վրա ջրասուզվել են 2 մօնիտոր: Ոչ մի ռազմանաւ չէ ջրասուզված: Միայն ընկղմված են երկու փոքր նաւ, որոնց մասին արդէն ազդարարվեց նոյեմբ. 21-ին:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 դեկտեմբերի

ՑԵՏԻՆԻԷ.—Պաշտօնական հաղորդագրութիւն դեկտ. 13-ից.

Մեր զօրքերը Սանջակում շարունակեցին առաջանալ, ըստ որում նրանց աջողվեց գրաւել թշնամու ձեռքում գտնվող գիւղերից մի քանիսը: Աւստրիացիք կրեցին խոշոր կորուստներ:

Մնացած զօրաճակատի վրա թնդանօթաձգութիւն է:

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Մեր ականանաւերի վերջին գործողութիւնների առիթով հաղորդում են, որ բուլգարական ափի մօտ գտնվող ականանաւերը հանդիպեցին թշնամու երկու առագաստանաւի և ջրասուզեցին նրանց, ռմբակոծելով, բացի այդ, բուլգարական ծովափնեայ պահակակէտերը: Թշնամու մի քանի սուզանաւեր յարձակում գործեցին «Գրոմկիյ» ականանաւի վրա, որ աջողութեամբ ճողոպրեց նետած երկու ականից և յարձակումը վանեց թնդանօթային կրակով: Հիմք կայ կարծելու, որ թշնամու սուզանաւերից մէկը ջրասուզվել է:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 դեկտեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ծովամերձ ուղղութեամբ՝ Շպարդէպի շրջանում յարձակում եղաւ մեր պարտիզանական զօրախմբի կողմից: Առ. ժամը 4-ին այդ զօրախումբը մօտեցաւ աննկատելի կերպով գերմանական ուղեկալին, մի քանի տեղ կտրտեց երկաթէ թելերը և շեշտակի յարձակվեց թշնամու վրա, նետելով ռումբեր: Ուղեկալը ոչնչացրվեց և թշնամուց 6 հոգի գերի ընկան: Ձը նայած հարաւային կողմից ուժեղ հրաձգութեան, մեր պարտիզանական խումբը անվնաս վերադարձաւ: Մեր կորուստներն աննշան են:

Չարտօրիյսկ կայարանի շրջանում Ն. Պօդչերէվիչի գիւղի մօտի գերեզմանատնից ոչ հեռու մենք ոչնչացրինք գերմանական մի ուրիշ ուղեկալ, գերելով 16 հոգի:

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն.

Արտուայում մեր արտիլերիան սկսեց ուժեղ ռմբակոծութիւն Բոյէլից դէպի հարաւ և Արրասից դէպի հարաւ: Շամպանիում մեր հրետանիներն աջողութեամբ ռմբակոծեցին թշնամու բանւորներին: Վէվրում մեր թնդանօթային կրակը պայթեցրեց թշնամու ռազմամթերքի պահեստը Բէնիվիլէից դէպի հիւսիս-արևելք: Վօգէզներում մենք ռմբակոծեցինք թշնամու մի գնացք, որ լի էր ռազմանիւթերով: Մեր դիտողութիւնը ցոյց տուեց, որ գնացքը պայթվել է:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 դեկտեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից:

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Համադանից դէպի արևմուտք մեր զօրքերը գրաւել են Ասադ-Աբադը:

Բաբաթ-Քէրիմ գիւղի մօտ տեղի ունեցած կռւի մէջ (Թէհրանից 40 վերստ դէպի հարաւ-արևմուտք) էմիր-Խիշմէտի հրոսակախմբերից գերվել են 71 հոգի:

(Սեփ. Թղթակցից)

Թաւրիզ, 1 դեկտ.

Համադանում հաւաքված գերմանօ-թիւրքական շայկայի գործունէութիւնը բաւական մթագնել էր վերջերս Պարսկաստանի քաղաքական հորիզոնը: Մամուլի հաղորդած տեղեկութիւնների համաձայն, այնտեղ հաւաքված է եղել պարսիկ ժանդարմների և «յեղափոխականների» բաւական մեծ թիւ: Հիմնված այդ ույժի վրա՝ Ղումի «ազգային կոմիտէն» պրօպագանդա էր մղում ի վնաս համաձայնութեան պետութիւնների և պարսիկ միամիտ մասսային մղում կործանաբար աւանտիւրայի: Այդ, սակայն, նրան չաջողվեց: Համադանի ցիտադելը ջարդ ու փշուր եղաւ: Մայրաքաղաքից ստացված հեռագրական տեղեկութիւնների համաձայն, Ղազվինից շարժվող ռուսական քաջարի զօրքը յաղթական մտել է Համադան, անասելի պարտութեան մատնելով գերմանօ-թիւրքական և մուջահիդների ու պարսիկ ժանդարմների բոլոր խմբերին:

Ռուսական բանակը միւս կողմից մօտեցել է Ղումին, իսկ այստեղ հաւաքված «ազգային կոմիտէն», նաև գերմանական ու աւստրիական ագենտները բոլորն էլ փախել են: Ահա այդպէս պատժվեցին նրանք, որոնք շլացած գերմանացիների կեղծ խոստումներից՝ իսկոյն նրանց գիրկը նետվեցին: Համադանի գրաւման և կռւի մանրամասները չը կան. միայն այսքանն է առ այժմ յայտնի, որ մուջահիդներն ու ժանդարմները կրել են սոսկալի ջարդ:

Ռուսական զօրքերի արշաւանքը ցոյց է տալիս, որ համաձայնութեան պետութիւնները որոշել են թողնել կոմպրոմիսների քաղաքականութիւնը և ձեռք առնել կտրուկ միջոցներ: Միայն այդ կերպ կարելի է խափանել խռովարար տարրերի գործունէութիւնը և վերականգնել խաղաղութիւնը Պարսկաստանում:

Robert

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

14 դեկտեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Ֆինանսների մինիստրը ամենահպատակօրէն զեկուցեց Թագաւոր Կայսրին, որ Բագուի նաւթարդիւնաբերող ֆիրմաները և տեղական նաւթային արդիւնաբերութեան համար երկաթածախ ֆիրմաները զինւորական փոխառութեանը մասնակցել են 12.532,000 ռուբլով: Նորին Մեծութիւնը բարեհաճեց սեփական ձեռքով մակագրել այդ առիթով՝

Կարդացի գոհունակութեամբ:

Ֆինանսների մինիստրութիւնը նախագծել է ակցիզի ենթարկել ամեն տեսակ մրգից և հում նիւթերից ստացվող սպիրտը, ամեն մի աստիճանին 20 կոպէկ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Շումսկին իր յօդուածում պատերազմական գործողութիւնների մասին մատնանշում է, որ չի կարելի ուշադրութիւն չը դարձնել այն զուգադիպութեան վրա, որը նկատվում է այժմ, երբ սաստիկ ցուրտը նոյնն է, ինչ 1812 թւականին։ Բացի ցրտերից մի ուրիշ համանման փաստ ևս կարելի է գտնել. դա է գերմանացիների, որոնք կանգնած են Դվինայի վրա, խաղաղութիւն կնքելու տենչը, որը նմանում է Նապոլէոնի հաշտութեան առաջարկներին, երբ նա նոյնպէս կանգնած էր Դվինայի վրա։ Գերմանացիք երկար և ուշադրութեամբ ուսումնասիրել են Նապոլէոնի արշաւանքը, մանրամասն պարզել են նրա սխալները և կտրականապէս որոշել են, որ այժմ շնորհիւ երկաթուղիների, հեռագրի և միւս տեխնիքական միջոցների՝ արշաւանքը դէպի Ռուսաստան կը պսակվի աջողութեամբ։ Սակայն նրանց անցած առաջխաղացութեան փորձը ցոյց տուեց, որ նրանք նոյնիսկ ամենալաւ պայմաններում առաջ գնացին միայն 200 վերստ ամբողջ ամառային պատերազմական գործողութիւնների մէջ և այդ էլ շնորհիւ նրա, որ մեր զօրքերը ետ քաշվեցին վաղօրօք որոշված ծրագրով։ Ի՞նչ կը լինի գարնանը և ամառը, երբ թշնամու առաջ կը լինի գործողութեան 500-ից մինչև 700 վերստ ուղղութիւններ, և երբ նա կարող է ի նկատի ունենալ մեր աւելի վճռական դիմադրութիւնը։ Ըստ երևոյթին այդ գծերը չի անցնվի ամառվայ ընթացքում, իսկ տերիտորիայի հասարակ գրաւումը, առանց զգալի վնասներ պատճառելու, մեզ ոչինչ չեն անի, ինչպէս այդ բանում արդէն համոզվել է թշնամին։ Պէտք է կարծել, որ ապագայ գործողութիւնների բացարձակ աննպատակ լինելը գերմանացիներին բերել է այն մտքին, որ համաձայնութիւն ձեռք բերեն իրանց համար նպաստաւոր մօմենտում։

◆ Նորվեգիական տեղեկութիւնների համաձայն, անգլիացիները ձեռք են ձգել գերմանական մետէօրօլօգիական կայանը Շպիցբերգէնում, որ, ըստ երևոյթին, եղել է գերմանական սուզանաւերի կայանը։

◆ «Рѣчь»-ը հաղորդում է, որ ֆրանսիական զինւորական միսիան գեներալ Պօյի գլխաւորութեամբ մեկնել է Արքայական կայանը։

◆ Ռուսական ականակիրները բօլգարական ափերում ոչնչացրել են երկու առագաստանաւ։

◆ Վիլնա-Դվինսկի րայօնում գերմանացիները անաջող փորձեր են անում ճեղքել ռուսաց զօրագիծը։

◆ Րիգայից հեռագրում են, որ գերմանական սաւառնակները ռումբեր են նետել քաղաքի վրա։ Միտավայի շրջանն են եկել գերմանական նոր զօրքեր, որոնք եղել են Սերբիայում։ Րիգայի շրջանում սպասվում է կռվերը։

◆ Մինսկից հեռագրում են, որ Պինսկը ամրացվել է որպէս բերդ։

◆ Անգլիական մի սուզանաւ Մարմարա ծովում ոչնչացրել է 13 փոքր շոգենաւ և 36 առագաստանաւ։

◆ Մոսկվայից հեռագրում են. «Զինւորական մինիստր գեներալ Պոլիվանովը կաբինետին առաջադրութիւն արաւ, թէ անհրաժեշտ է զինւորական ծառայութեան կոչել ուսանողներին։ Մինիստրը մատնանշում է, որ պրապօրշչիկների դպրոցը մտնում են առանց հարկաւոր կրթութեան տէր անձինք, մինչդեռ զօրքը կարիք ունի կրթված օֆիցերների։ Այդ նպատակի համար բացված են զինւորական դպրոցներ ուսանողներին ընդունելու համար, սկսած 19 տարեկանից։ Ի նկատի ունենալով որ ուսանողները զէնքի են կանչվում բացառապէս օֆիցէրական կազմը լրացնելու համար, իսկ հրէաները օրէնքով չեն կարող օֆիցերներ լինել, մինիստրն առաջարկում է առ այժմ հրէայ ուսանողներին չը կանչել ծառայութեան»։

◆ Ռուսաստանի 1916 թ. եկամուտը փակվելու է 327 միլ. րուբլի դեֆիցիտով, որ արդիւնք է պատերազմի։

◆ Անգլիացիք նորից աջողութիւն են ձեռք բերել Բաղդադի ուղղութեամբ և ետ են խլել կորցրած դիրքերից մի քանիսը։

◆ Նիւ-Եօրկից հաղորդում են, որ լուրերի համաձայն՝ երևան է հանված գերմանացիների նոր դաւադրութիւն. դաւադիրները կամեցել են պայթեցնել Պանամայի ջրանցքը։

ՌՈՒՍԱԿԱՆ ԶՄԵՌԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ

Թէ ինչպէս են գերմանացիները անց կացնում ձմեռվան առաջին օրերը ռուսական ռազմաճակատում, Դվինի շրջանում, այդ մասին հետաքրքրական պատմութիւն է արել մի լատիշ «Бирж. Вѣд.»-ի աշխատակցին։

Այդ լատիշը գերվել է գերմանացիների կողմից և որովհետև վիրաւոր է եղել, երկու օր ու գիշեր մնացել գերմանացիների դիրքերում։

Նա պատմում է, որ գերմանացիները ամեն միջոց գործ են դնում խրամատները չոր պահելու համար, բայց երբեք չեն կարողանում քամուց քշվող ձիւնի հոսանքի առաջն առնել, որ շարունակ լցվում է փոսերի մէջ։ Եղել են դէպքեր, երբ խրամատների եզերքին կիտված ձիւնի ծանրութեան տակ փլվել են խրամատների պատերը գերմանացիների վրա։ Այդ խրամատների առաջն առնելու համար գերմանացիներն արդէն Գերմանիայից, Լիբավայի վրայով, ստացել են առանձին ձիւնահալիչ մեքենաներ, որ նրանք գործադրում են ոչ միայն խրամատներում, այլ և դրանից մէկից միւսին մօտենալու ճանապարհին։ Եւ որովհետև այդ ձիւնահալիչների համար հարկաւորվում և պահանջվում է մեծ քանակութեամբ վառելափայտ, ուստի գերմանացիները ամենայն եռանդով կտրում են շրջակայ անտառները և ծառերը և կրում խրամատների մէջ։

Ձիւնաբեր ամպերի դէմ կռւելու համար, գերմանացիները ստացել են նաև առանձին մօրտիրներ (այն մօրտիրների ձևի, որոնց Գերմանիայում գործադրում են կարկտաբեր ամպերի դէմ գիւղական անտեսութիւններում)։ Չը նայած այս ամենին, թէև դեռևս ռուսական իսկական սառնամանիքներ չեն եղել Դվինայի ռազմաճակատում, բայց գերմանացիներն արդէն իրանց բարակ վերարկուների մէջ խիստ տանջվում են ցրտից։ Խրամատներից լազարէթներ են ուղարկվում շատ զինւորներ սառած ձեռքերով ու ոտներով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՊԷՏՔ Է ՕԳՆԵԼ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Ներկայ 1915 թւականի անբերրիութիւնը արդէն պարզորոշ է։ Մասամբ աշխատող ձեռքերի պակասութիւնը, մասամբ սերմ չունենալը և մասամբ, դեռ այժմ էլ շարունակվող, երաշտը [illegible] եղան գիւղացիութեանը բաւարար աշնանացան անելու։ Նա ունեցած հացահատիկը կամ կերել պրծել է կամ պրծնելու մօտ է, և շատ քիչ բաղդաւորներն են, որոնք թէ ուտելու հաց ունենն և թէ ցանելու սերմ։

Գիւղացիութիւնը յոյսը դրել է գարնան անելիք ցանքսի վրա, բայց այդ օրերին էլ մի մասը եզը չէ ունենալու, մի մասն էլ ոչ եզ և ոչ էլ սերմացու։ Ուրախալի է, որ մեր կուլտուրական հիմնարկութիւնները և ազգասէրները, ըմբռնելով ապագայի վտանգը, հրապարակ են նետվել, հնարաւոր սահմաններում, օգնութեան հասնել գիւղացիութեան՝ մատակարարելու թէ ուտելու ալիւր ու ցորեն և թէ սերմացու։ Բայց Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան օգնելու ձևից կօգտվեն միայն մեծ ունեւորները, իսկ բուն կարիքաւոր, ծայրագոյն խորքերի գիւղացիութիւնը՝ ոչ, որովհետև նախ որ այնքան գումար չեն կարող հաւաքել որ մի վագոն ցորեն բերել տան, մէկ էլ որ՝ համայնքի ցաւերով հետաքրքրվող, մի քանի գիւղերի հասարակութիւններին միացնող, միացած ոյժերով գործ առաջ տանող մարդիկ չունենք։ Բացի այդ՝ ոչ կարգին ճանապարհներ կան և ոչ էլ բաւարար գրաստներ, սայլեր՝ կայարաններից գաւառի ներսը տեղափոխելու։ Սակայն վերջին պակասը էլի մի կերպ կը լրացվի, բայց բանն այն է, որ գիւղացին փող չունի։

Բագւի ընկերակցութեան անելիք քայլը, որ նա մտադիր է տալ գիւղացուն անհրաժեշտ պարէնն ու սերմը փոխարինաբար, մի տարուց յետոյ ստանալու, դա է օգնութեան այն ձևը, որը կը փրկի գիւղացիութեանը գալիք սովի վտանգից։ Այո, եթէ մեր կուլտուրական հիմնարկութեանց գլուխ կանգնածները և մեր ազգասէր-ժողովրդասէրները ուզում են ժողովուրդը փրկել թէ տնտեսական անկումից և թէ ապագայ՝ ոչ արհամարհելի սովից, պէտք է շտապեցնեն օգնութեան գործը, և այն էլ մտածված ու խելացի կերպով, որ օգնութիւնը ժամանակին լինի և ոչ ուշացած։

Օգնելով գիւղացիութեանը՝ օգնած կը լինենք և գաղթականներին, որովհետև եթէ գիւղացին հաց ունենայ, նա ուրախութեամբ բաժին կը հանի և իր վտարանդի թիւրքահայ եղբօրը, որով և մեծ թեթևութիւն առաջ կը բերի գաղթականներին խնամելու գործում։

Գիւղացիութեանը սերմացու պէտք է հասցնել ոչ ուշ մարտ ամսի սկիզբներից, տեղ-տեղ ոչ ուշ՝ ապրիլի սկզբից, այլապէս ուշ օգնութիւնը կը նմանվէր՝ հիւանդի համար քահանայ հրաւիրելու ժամանակ բժիշկ հրաւիրելուն։

Ներկայ տարվայ համար Բագւի Հայոց Կուլտուրական Միութիւնը, որպէս օգնութիւն, Մեղրիի շրջանի պահեստի ընտանիքների համար ուղարկել էր բամբակի սերմ և չերամի սերմ, բայց տեղ հասաւ այն ժամանակ, երբ բամբակացանքը վերջացել էր, չերամը երկրորդ քնի, և չերամի սերմերը տուփերում արդէն կենդանացան։ Ինչ խօսք՝ եթէ նրանք ժամանակին հասած լինէին, մեծ օգնութիւն կը լինէր շատերին։

Օգնութիւնով հնարաւորութիւն տալով գիւղացիութեանը բաւարար գարնանացան անելու, մանաւանդ եթէ բնութիւնն էլ նպաստէր, ոչ միայն մեծ բարիք արված կը լինէր գիւղացիութեան, այլ այդպիսով երկիրը փրկված կը լինէր սովից առաջանալիք շատ անցանկալի արհաւիրքներից։

Եթէ այսօր պարտականութիւն է համարվում աւերված Հայաստանի բեկորներին պահպանել, որպէս քուրաքանդ Հայաստանի ապագայ վերաշինողներ, ուրեմն էլ աւելի մտահոգութեան առարկայ պիտի դառնայ՝ ներկայումս սովի չափ թանգութեան ճիրաններում կուչ ու ձիգ անող գիւղացիութիւնը։

Չը պէտք է թողնել, որ գիւղացիութիւնը վհատութեան հասնի, և հարկաւոր է լուրջ գործելակերպով ու ժամանակին հասցնել օգնութիւնը։ Պէտք է սահմանել այնպիսի բաշխման կարգ—փողով, փոխարինաբար, նպաստ, միևնոյն է—որ բաւարարվեն բուն կարիքաւորները, այլ ոչ թալանչիները, դէպքից օգտվողները, ունեցողներն ու շահագործողները, որոնց թիւը քիչ չէ գաւառներում։ Տրվելիք ցորենները պէտք է ամբարել գիւղախմբերի որոշ կենտրոններում և պատասխանատու մարմինների—հասարակութեան ընտրած ներկայացուցիչների—միջոցով բաց թողնել կարիքը վկայված գիւղացիներին։ Բացի այդ՝ խիստ հսկողութիւն պիտի սահմանել, որ սերմացուի համար առնված ցորենը գիւղացին սերմանի, այլ ոչ թէ տանի ուտի։

Պէտք է շտապեցնել օգնութեան գործը և սերմացուն հասցնել ժամանակին, որով և առաջը կառնվէր գալիք հնարաւոր սովի։

Մեղրի Ե. Վարդանեան

ՀՆԻՑ ՈՒ ՆՈՐԻՑ

I

Խրիմեան Հայրիկի նամակը

Առ բարերար և Մարդասիրական Ընկերութիւն ս. Լուսաւորչի ի Բագու։

Լսելով արդէն ձեր Մարդասիրական Ընկերութեան սուրբ և բարի նպատակ, որոց հիմն և սկզբունք Աւետարանի քարոզած վարդապետութիւնն է, կը վստահիմ աներկբայապէս սոյն յանձնարարութիւնը գրել առ ձեզ։

Բնիկ վանեցի պ. Նազարէթ որ ինձ քաջ նախածանօթ հայրենեաց անձնուէր մի անձն է և որ այժմ այդ կողմ հասած իւր ձեռնարկութիւնը իրագործելու համար։ Այդ անդուլ վաստակաւոր մշակը գրեթէ ութ տարի կը լինի որ Վանայ մօտ տեղերում մի նաւթի հանք գտած է և յաջողեցեր է արտօնութիւն ստանալ Թիւրքիոյ կառավարութենէն բազում աշխատութեամբ. այս մասին համար լիովին տեղեկութիւն կարող էք ստանալ իրմէն։ Ուստի կը խնդրեմ, որ ձեր Մարդասիրական Ընկերութիւնը օգնական ձեռք կարկառէ դորան. վասնզի այս ձեռնարկութիւնը իր ուժին հետ անհաւասար է. և արդէն ձեզ քաջայայտ է թէ մեր հայրենեաց որդիքներ պատերազմի երեսէն մեծամեծ աղէտներ կրելով անկարող են օժանդակել այսպիսի ձեռնարկութեան։

Իսկ դուք որ մեր հայրենեաց զարգացման և յառաջադիմութեան համար հիմներ էք այդ Ընկերութիւնը, որ Մարդասիրական անունը կը կրէ, երբեք չեմ կարծեր թէ խորշէք Վասպուրականի հայէն։ Մանաւանդ երբ նկատէք թէ այսպիսի մի ձեռնարկութիւն մեր ժողովրդի նիւթական կեանքը բարւոքելու։ Միայն մտաւորական զարգացումը բաւական չէ, այլ պէտք է մտքին հետ հաց պատրաստել հայրենեաց կարօտ որդիքներուն։ Մեր հայրենեաց հարստութեան աղբիւրներ անթիւ են. բայց խցված են նորա ակներ. պէտք է արուեստով և ճարտարապետութեամբ բանանք այդ ակները։

Այսչափ գրելով կը յուսամ, որ սոյն յանձնարարութիւնը վստահապէս ընդունիք յօգուտ հայրենեաց և ի փառս ձեր Մարդասիրական Ընկերութեան։

Մնամ աղօթանուէր ձեզ՝

Խրիմեան Հայրիկ

1878 նոյեմբեր 15

ի Կ. Պոլիս

II

Ցեխոտ նամակի առիթով

Խրիմեան Հայրիկի այս նամակը, որ հրատարակում ենք անփոփոխ, մենք հանել ենք Մարդասիրական Ընկերութեան արխիւից։ Այդ նամակի վրա Մարդասիրականի խորհուրդը մակագրած ունի. «Առ այժմ թողնում ենք առանց պատասխանի»։ Տարօրինակ է, չէ՞։ Մի հոգևորական խօսում է արհեստի և ճարտարապետութեան, հայրենիքի հարստութեան փակ աղբիւրների բացման մասին, իսկ նրանք, որ աշխարհական լինելով աւելի շատ պիտի մտահոգեն այդ մասին, որ ապրելով մի վաճառաշահ և արդիւնաբերական քաղաքում՝ հէնց գործ ունենն արհեստի ու ճարտարապետութեան հետ, այդ մարդիկ որոշում են անպատասխան թողնել նիւթական բարիքի հեռանկար բացող առաջարկը։ Սա հայ ազգային կեանքի վիրաւոր կողմն է կազմում. հայ հայրենիքի հարստութիւնների աղբիւրները մնում են առանց մշակման ու շահագործութեան, իսկ հայ ունեւոր դասակարգի դրամագլուխները դեգերում են օտար հորիզոններում։ Եւ այս պատճառով հայութիւնը կապիտալիստ դասակարգ ունի՝ առանց արդիւնաբերական զարգացած կեանք ունենալու իր հողի վրա, իր հօծ բնակութեան վայրերում։ Հարկաւ, այս երևոյթի պատճառը պիտի փնտռել մեր դժնդակ պատմական անցեալում։ Հէնց այդ դժնդակ պատմութիւնն է հաւանօրէն իր խորհուրդը փսփսացել Բագւի ունևորներին, որ անյուսալի ձեռնարկ է գոյք և դրամագլուխ գործադրել Վանի պէս մի վտանգաւոր վայրում, որ Թիւրքիայի յեղյեղուկ կեանքը երաշխիք չի ներկայացնում արդիւնաբերական կեանքի զարգացման համար։ Բայց, վերջապէս, ո՞վ պիտի հայ հայրենիքին այնպիսի քաղաքական կեանք պարգևէ, որ նրա հովանու տակ հնարաւոր լինի բանալ հարստութեան «խցված ակները», որ հայ ժողովուրդն էլ ամուր փարէ արդի եւրոպական կուլտուրային, որ կապիտալիստական հասարակակարգի կուլտուրան է։

Մի օտար մարդ, մի ոչ-հայ մեր հարցին կը պատասխանէր, թէ ապահով հայրենիքի մտահոգութիւնը նախ և առաջ զուրգուրանքի առարկայ պիտի լինի հայ ունեւոր դասակարգի համար։ Սա բնական է և տրամա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

I

Որովհետև ես իմ մանկութիւնը շատ եմ սիրում, այդ պատճառով սովորութիւն ունեմ յաճախ յիշել մանկութեանս օրերը։ Եւ այդ օրերը յիշելով, թէ՝ այս ի՞նչ տարին էր այս պատահեց, այն ինչ օր՝ այս, ես զգում եմ մի անծայր սփոփանք։ Մանկութեան ամեն մի դէպք, իւրաքանչիւր մի անցք, լինի դա չնչին, ուրախ թէ տխուր, անուշ է թւում։

Ու մանկութիւնս յիշելով, չը գիտեմ ինչու, նրա բոլոր օրերն էլ ինձ երևում են լուսազարդ, երկինքը կապոյտ, սրտերը սիրող, դէպքերը ժպտուն։

Մանկութիւնս յիշելով, դարձեալ չը գիտեմ ինչու, առաջին պահ ես տեսնում եմ միայն փոքրիկ, անհանգիստ մանուկներ, որ վազվզում են փայտէ-ձիեր հեծած. տեսնում եմ կաչաղակի բներ ծառերի վրա, որ հեռուից նմանում են ճղների արանքն ընկած հովի փափախի. սարեակներ՝ բարտիների կատարին, որ ձագ տուած մեղուների պէս սևացրել են ճղները, և նորածին հորթեր, որ պոչները ցցած վազում են փողոցներով. տեսնում եմ սագերի դեղին ձագեր, որ անվախ լողում են ջրերի երեսին, և ես նրանց նայելով զարմանում եմ, որ այդքան փոքր են ու չեն խեղդվում. տեսնում եմ մեր Սևուկ շանը շեմքի մօտ նստած, որ դունչը դրած թաթերի վրա՝ աչքի տակով հսկում է անց ու դարձողին։ Շնից անմիջապէս յետոյ տեսնում եմ մեր շէկ, երկար մազերով և հաւաբնից շարունակ ձու գողացող կատուին, որ մռռալով նինջում է տատիս ծնկան և, վերջապէս, իմ ծեր, իմ բարի տատին, որ ձմրան երեկոյին, օջախի առաջ նստած, իր սև տէր-ողորմեան քաշելով, պատմում է ինձ դևերի, քաջքերի մասին, իսկ ես՝ մի փոքրիկ ու միամիտ տղայ՝ յափշտակութիւնից ու երկիւղից բերանս բաց ունկնդրում եմ նրան։

Բայց այս բոլորից յետոյ, տեսնում եմ մէկ էլ մոռացութեան խաւարից, շիրմից հանդէս են գալի հարազատ ու ծանօթ դէմքեր։ Եւ իբրև մի հին, վաղեմի երգի կտոր՝ ականջիս հնչում է նրանց կենդանի զրոյցը, ու ես, կարծես աշխարհ, նրանց բերանից լսում եմ սիրելի խօսքեր, մոռացված խօսքեր։

Լսում եմ, թէ ինչպէս տանուտէր Արսէնը հայհոյում է հօրս, ծեր քահ. տէր-Սարգիսը գանգատվում է իր եկամուտի պակասութեան մասին, քեռի Սիմօնը խօսում է անտառում թաղնված գանձի վրա, իսկ հարևան Պետրոսը հաւան չի կենում երկաթուղուն։

Մանկութիւնս մտաբերելով, ես առանձնապէս եմ յիշում հարևան Պետրոսին և երկաթուղին, որի առաջին շվոցը մեր գիւղում հնչեց այնպէս, ինչպէս որ, ս. Գրքի ասելով, Գաբրիէլեան փողը պէտք է հնչի ահեղ դատաստանի օրը՝ իրարանցում գցելով մարդկանց մէջ։

Հարևան Պետրոսին ես մանաւանդ յիշում եմ այն ժամանակ, երբ երկաթուղով որևէ տեղ եմ գնում կամ դժգոհութիւն եմ լսում երկաթուղու մասին։

Այս երկուսին իրար հետ յիշելուս պատճառն այն է, որովհետև սրանք... Բայց այդ մասին աւելի լաւ է սկզբից պատմեմ։

Ինչպէս յայտնի է, առաջ, նախ քան երկաթուղին, մեր գիւղացիները ճանապարհորդում էին ձիերով, ճռռացող սայլերով և աղմկարար ու ճանապարհներից փոշու ամպեր բարձրացնող ֆուրգոններով. ամենից շատ, ի հարկէ, ֆուրգոններով։

Ինչպէս մեր շրջանի բոլոր աւաններում ու շէներում, այնպէս էլ մեր գիւղում կային մի քանի ֆուրգոններ, որոնց գործը այն էր լինում, որ միշտ բուրդ, բամբակ, ալիւր, դեռմանինձր ու մարդ էին տեղափոխում գիւղից քաղաք, քաղաքից գիւղ կամ գիւղացիներին տանում էին սուրբ Գէորգ (մեռնեմ իր զօրքին) ուխտ։ Դրանք՝ այդ ֆուրգոնատէրերը բոլորն էլ իրար նման մարդիկ էին—երկար միրուքով և մօլօկանի ձևով կտրած մազերով։ Նրանք իրանց հագուստներով էլ մի քիչ նման էին մօլօկանի և հեզութեամբ ջոկվում էին գիւղացիներից, ինչպէս գարին ցորենից։

Այդ ֆուրգոնատէրերից մէկն էլ մեր հարևան Պետրոսն էր։ Նա էլ հագնվում էր մօլօկանի պէս, մազերը կտրում էր մօլօկանի նման. և եթէ նրա փափախը, սև դէմքն ու սև մազերը չը լինէին, կարելի էր կարծել, որ նա էլ մօլօկան է։

Լա՛ւ մարդ էր հարևան Պետրոսը։

Երբ իր քառաձի ֆուրգոնով նա վերադառնում էր քաղաքից, մենք երեխաներս աղմուկով ընդառաջ էինք գնում նրան և ծառս լինում ֆուրգոնի ճաղերին։ Մեր այդ խանդավառութիւնը նկատելով, նա գրպաններից հանում էր կանֆէտ ու խնձոր և «ահա ձեզ, լակոտներ» ասելով, ցրում գետին։ Մենք, իրար թակելով, հաւաքում էինք կանֆէտն ու խնձորը և գնում շրջապատում նրան իր դռանը, լսելու թէ ինչ լաւ-լաւ բաներ պէտք է պատմի նա, կամ տեսնելու, թէ ինչ է բերել քաղաքից։

Եւ այնպիսի բաներ էր բերում նա քաղաքից իր տղաների համար, որ ես միշտ նախանձում էի նրանց։

Նա իր տղաների համար բերում էր ճտաւոր կօշիկներ, շվի, ծոպաւոր գօտի, թիւրքական ֆէս և, վերջապէս, այնպիսի բաներ, որ իմ հայրը երբեք չէր առնում ինձ համար... Մի խօսքով՝ հարևան Պետրոսը շատ էր սիրում իր երեխաներին։ Բայց նա աւելի շատ սիրում էր իր ֆուրգոնը և ձիերին, և ամեն անգամ պարծենում էր, որ իր ֆուրգոնի և ձիերի նման չի գտնվի ողջ նահանգում։

— Հապա՛. մէր մեռնի Պետրոսի ձիերի, —ասում էր նա, նրանց նման ձի որտեղ կայ... Սրանք հրեղէն են, ոչ թէ ձիեր... Մի անգամ Երևանի ճամբին ամենքի ձիանքն էլ յոգնեցին ու վեր թափվեցին, իսկ իմոնք, աչքով չը տանք, Տէրն ոյժ տայ, էնպէս էին գնում, ինչ որ Թեւսոր—փառք... Մալայէց...

Ու այս ասելով, հարևան Պետրոսը գոհունակութեամբ ծծում էր իր ծխամորճը և աչքերը ծոր տալիս։

Նա,—մոռացայ ասել—սովորութիւն ունէր, որ միշտ մեր տուն կը գար և ձմրան երկար երեկոներին հօրս հետ կը նստէր օջախի առաջ ու զրոյց կանէր զանազան բաների վրա, ու ամեն խօսքի վերջում կը կրկնէր.

— Էսպէս բաներ, հարևան...

Մի անգամ, շատ լաւ միտս է (և ինչպէս միտս չը լինի այդ արժանայիշատակ օրը), այդ զրոյցների ժամանակ հայրս ասաց նրան.

— Պետրոս, հիմի ձեր գործը վատ կը լինի. ասում են, երկաթի ճամբայ պէտք է գայ...

— Բարով, հազար բարի, —ասաց հարևան Պետրոսը. —գայ էլ, գնայ էլ. ինձ ի՛նչ...

— Ոնց թէ, —ասաց հայրս, —ախր որ էդ երկաթի ճամբէն գայ, նրանից յետոյ ամեն բան՝ մարդ, ապրանք մաշինով կը տանեն կը բերեն, էնպէս որ ֆուրգոնի էլ գործ չի մնայ...

Հօրս այս խօսքերի վրա հարևան Պետրոսը չիբուխը հանեց բերանից և զարմացած նրան նայեց։

— Ո՞նց թէ, —ասաց, —մաշինէն ֆուրգոնի բանը կարո՞ղ անի։

— Ի հարկէ, —պատասխանեց հայրս. —մաշինէն էնպէս բաներ է անում, որ ֆուրգոնը սկի չի կարող անել։

— Է՜հ, դու էլ բան ես ասում, —ասաց հարևան Պետրոսը և նորից չիբուխը կոխեց բերանը։

— Ես քեզ հաստատ բան եմ ասում, —ասաց հայրս և սկսեց բացատրել, թէ երկաթուղու գնացքը ինչեր է անում։

Նա ասում էր, որ ինքը լրագրում կարդացել է (հայրս լրագիր էր ստանում), թէ այդ գնացքը մեր խոտի ամբողջ դէզը մի օրում կարող է տանել «մինչև Ծիրանդատան», իսկ մեր ամբողջ գիւղը իրա տաւարով ու մարդկանցով կը տեղաւորի իր մէջ։ Նա ուրիշ շատ բաներ էլ էր ասում, բայց դրանցից միտս է, որ այդ գնացքը կարող էր հարևան Պետրոսի ֆուրգոնը իրա ձիերով, ջրի դոյլով ու գարու խախալով մի քանի րոպէում թռցնել քաղաք։

Հօրս խօսքերը լսելով, ես զարմանում էի, թէ ինչպէս կարելի է ֆուրգոնը իր ձիերով տանել այդպէս. ապա այդ գնացքը չի կոտրվի, կամ ձիերը նրան քացի չեն տայ։ Մինչ ես զարմանում էի այսպէս, հարևան Պետրոսը, ծխամորճը քաշելով, բեղի տակ ծիծաղում էր հօրս խօսքերի վրա։ Եւ երբ հայրս վերջացրեց իր բացատրութիւնը, նա ծխամորճը հանեց բերանից, մոխիրը թափ տուեց օջախի մէջ ու դարձաւ հօրս.

— Տնաշէն, —ասաց նա խնդալով, —էդ ինչ որ ասում ես, էդ հօ սատանի գործ է. Մէրը մեռնի Պետրոսի ֆուրգոնի, որ մաշինէն նրա բանը պէտք է անի... Մի տեղ որ ձի չը լինի, մի տեղ որ լած ու փօծիկ (կրասանակներ) չըլի, նրանով կարելի է մարդ ու ապրանք տանել-բերել...

— Քեզ ասում եմ որ կարելի է, —ասաց հայրս, և նորից սկսեց իր բացատրութիւնները։

Նա աշխատում էր համոզել հարևան Պետրոսին, որ երկաթուղու գնացքը կարող է ամեն բան անել և տանել. բայց հարևան Պետրոսը չէր համոզվում ամենևին և շարունակ կրկնում էր խնդալով.

— Դա սատանի գործ է, հարևան, մի հաւատա...

Եւ սրանից յետոյ գիւղում ով որ խօսում էր երկաթուղու և մանաւանդ գնացքի մասին, հարևան Պետրոսը միշտ ասում էր նրան, ժպիտը երեսին.

— Դա սատանի գործ է, հարևան, մի հաւատա։ Նա ֆուրգոնի տեղը սկի չի բռնի...

Ստ. Զօրեան

բանական։ Սակայն ցաւը նրա մէջն է, որ մեր նոյն դժնդակ անցեալը հակառակ պատասխանն է կերտել։ Հայ ազգի բոլոր խաւերը տոչորվում են հայրենիքի կարօտով, բայց այդ զգացումը խորթ է հայ ունևոր դասակարգին։ Մենք այստեղ լոկ արձանագրում ենք փաստը։ Տեղը չէ պատճառաբանել մեր ասածը, նիւթական և հոգևոր հիմունքներ առաջ մղել՝ նրա ճշմարտութիւնն ապացուցանելու համար։ Ընդունենք, որ հայ հայրենիքի իդէալը կերտվել է առանց առևտրա-արդիւնաբերական բուրժուազիայի գործակցութեան և որ այդ դասակարգը պատրաստ տուն է փնտռում՝ առանց աշխատանքի նեղութիւն կրելու նրա կառուցման վրա, Խրիմեանի նամակը և այդ նամակի անգիտացումը գալիս են ապացոյց ծառայելու մեր ասածին։ Դ. Անանուն

(«Նուէր Որբերին»)

ԴԻՊԻ ՎԱՆ

—

Ջուլֆա, 9 դեկտ.

Վերջապէս Քաղաքների Միութեան կարաւանը ճանապարհ ընկաւ Թիֆլիսից դէպի Վան։ Կարաւան եմ ասում, որովհետև այն արագութիւնը, որով մենք երկաթուղով գնում էինք, դա ուղղակի բիբլիական էր. այդպիսի ընթացքով գնում էր, երևի, Մովսէս մարգարէն իսրայէլացիների հետ. հինգ օրում Թիֆլիսից Ջուլֆա հասանք, որից մի օրը անցրինք Թիֆլիսի և Նաւթլուղի մէջ մանեօվրներ անելու վրա։

Մեր խումբը, բաղկացած 35 հոգուց, ցրվելու էր Ջուլֆա-Սալմաստ-Խոյ-Վան շրջաններում, սակայն բոլորն էլ միաբերան Վան էին ուզում ու խնդրում գնալ, մանաւանդ ռուս քոյրերը։

Այսօր հասանք Ջուլֆա և տեղաւորվեցինք Քաղաքների Միութեան հաստատութիւններում։ Վաղը մեր տրանսպորտը ուղևորվում է Խոյ, որտեղից անցնելու ենք Վան։

Օտարոտի առանձին կենդանութիւն էր տալիս տ. Տէրմէնը իր երեխաներով. կարծես գարնան ծիծեռնակներ լինեն. իսկ գարունը հեռու է... Ս. Աթանասեան

ԱՐԻՒՆՈՏ ԷՋԵՐ ՏԱՐՕՆ-ՍԱՍՈՒՆԷՆ

—

Թղթակցութեանս աղբիւրներն են Մուշի ս. Կարապետի անտառի խորքերէն ու խոռոչներէն փախչող 66 տարօնցիները և իրենց առաջնորդները՝ բալլուեցի պ. Յովհաննէս, սասունցի Բալեկեան Սարգիս անուն քաջարի զինուորը, գոմսեցի պ. Միսաք, զինուոր Խաչիկ, ս. Կարապետի վանուց Ջուխտակ և Բաղլուի ուսուցիչները և այլն և այլն։

Ասոնցմէ առաջինը լուրջ ու փորձառու դէմք մըն է, մաշած ու տանջուած երկար տարիներ իր արիւնոտ հայրենիքի ցաւերով ու դարդերով, կը պատմէ ու կը զրուցէ շատ ընորոշ ու շատ բացայայտ տեղեկութիւններ, նոյն իսկ օսմանեան պաշտօնական աղբիւրներէն քաղուած, բայց թէ ինչպէս են բերուեր այդ տեղեկութիւնները ձեռք, զանազան պատճառներով՝ աւելորդ կը համարիմ բառ մը իսկ ընելու։

Խնդիրը երբ Հայաստանի ու Տարօնի կոտորածներուն հետն է, կարժէ մեր ընթերցողները ծանօթացնել այն կարգադրութիւններուն, որոնք Էնվէրներու և Թալէաթներու կամարիլլայէն կուգային, ապրիլէն անմիջապէս յետոյ։

I

Ապրիլ կէսին դեռ Մուշ էի, և միշտ ժողովրդեան հետ ու հասարակաց կարծիքի մէջ։ Հասարակութիւնը այնտեղ խորապէս համոզուած էր, որ պիտի կոտորեն հայերը, սակայն անմեղ երախաներուն ու կիներուն չպիտի դիպչէին. խելք ու միտք չէր հաշտուէր այդ գաղափարի հետ։

Ռուսական քաջարի բանակը Մանազկերտը գրաւելէն յետոյ, անջրպետը բացուած էր. կտրուած ու խզուած էինք մեր սիրելիներէն եւ պաշտելիներէն, հայրենիքէն ու տունէն, միայն ցան ու ցրիւ տեղեկութիւններ էր որ կուգային մերթ փախստականներու և մերթ ալ հաւքերու թևերով, թէ հրդեհը բռնկուած է, հուրն ու սուրն սկսած են հրձիգել ու խանձել Հայաստանն ու հայաստանցին, մէկ ծայրէն միւս, առանց բացառութեան ու առանց զանազանութեան տարիքի ու սեռի։

Հոգեկան որպիսի՜ ճգնաժամ. ոչ կար և ոչ կորով մնացեր էր վրանիս, որ յաջողուեցանք առ ժամ հեռայ տարբերութիւն մը թղթով ու գրով հաստատել Տարօնի առաջնորդարանի և Տարօնի մարտիկներուն հետ, գէթ չմեռած խօսեցնել զիրենք ու լսել իրենց վերջին կտակն ու վերջին խօսքը, որովհետև ո՛չ թէ իրենք, արարած աշխարհ համոզուած էր, որ քիչ ժամանակէն յետոյ՝ այլևս հայ չպիտի մնար, մեծօրէից խօսքը կանխեր ու կանխակայեր էր զիրենք «վայ զհայ Թիւրքի ընցնումը»։

Մայիսի վերջերն էր, որ կը գրէին Մուշէն, թէ Իթթիհադի կողմէն Հիլմի բէյ անունով մէկ մը դէպի հայաբնակ գաւառներն ճամբայ ելած է, տառապէս ու բառապէս գործադրելու Իթթիհադի ծրագիրը՝ հայերը ջնջելու մասին։

Անուղղակի կերպով հարցուցած են եղեր պաշտօնական Թիւրքիայէն, թէ Հիլմի բէյ ինչու կուգայ գաւառները. կառավարութիւնը միշտ կեղծած ու միշտ խաբած է, ըսելով թէ ան կուգայ պատերազմական գործողութիւններուն հսկելու համար։

Բացի Հիլմի բէյէն, այդէն պէտք եղած հրամանը կանխաւ տրուած էր զինուորական ու քաղաքային իշխանութեանց հայերը արմատախիլ ընելու համար աշխարհիս երեսէն. Հիլմի-բէյ աչքակից կը ղրկուէր, կամ լաւ ևս է ըսել՝ տառական գործադրութեան համար։

Մայիսի 18-ին կը հասնէր Հիլմի-բէյ Կարին. ըստ տրուած տեղեկութեանց, հոն մաքրուած էր. կուղևորէր Խնուս, հոն ալ մաքրուած էր. յունիսին Բուլանըխ-Խլաթի ճակատի վրայ էր, այդտեղերն ալ բան չէր մնացեր։

II

Մուշէն եկած վերջին տեղեկութիւնները յունիս 18 թուականը կը կրէին. վերջին խօսքն ու վերջին կտակն էր, որ կը գրէին, թէ Հիլմի-բէյ, որ եկած է ուղղակի Հայաստանը կոտորելու, հետը ունի երեք վաշտ զինուոր, մէկ թաբուր ժանդարմա, Հաջի Մուսա-բէյի և շէյխ Հազրէթի կամաւորները։ Կը լսենք որ ասոնք բոլորը Մուշի դաշտ իջեր են ու սկսեր՝ հայերը կոտորելու. ալ չլսուեցաւ անոնց բողոքը, մինչև որ եկան փախստականները երամ-երամ ու բերին սև լուրեր։

Պատմեցին ու գրի առին շատ բաներ Տարօն-Սասունի կոտորածներու մասին, բայց ոչ այնքան ինքնատիպ ու իսկական, քան մեր քաղած տեղեկութիւնները, որ նօթագրեցինք վերոյիշեալ փախստականներէն։

Բանակէն բերուած այդ ուժին կը միացուէր նաև Մուշի դաշտի մէջ գտնուած խուժանը՝ Ալաշկերտի իսլամ մուհաջիրները (գաղթական), Բաթնոցի մուհաջիրները իրենց աշիրեթապետի՝ Քեօռ-Հիւսէյին փաշայի ղեկավարութեամբ, Անթափի մուհաջիրները՝ Աբդիւլ-Մէջիդ-բէյի ղեկավարութեամբ, Մանազկերտի և Բուլանըխի մուհաջիրներն իրենց ցեղերու ղեկավարութեամբ։

Հայախօշոշ այդ խմբերը մինչև յունիս 28 կը զբաղին գիւղերու պաշարմամբ. իւրաքանչիւր գիւղ 50 զինեալ կը ղրկուի և գիւղը կ՚առնուի հսկողութեան տակ. ապա կը կազմուին շրջան կամ թուեցիկ խումբեր՝ առաջիններուն օգնելու համար։

Ապա՝ Մուշի դաշտի ու քաղաքի կոտորածներու միջոցին, այդ խմբերը իրարու կը միանան, ինչպէս և այդ գաւառներուն ղեկավարները, որպիսիք են՝ Վանի կուսակալ Ջէվդէթ բէյ, Դիրմանի հրամանատար Խալիլ-բէյ, Բիթլիսի կուսակալ Աբդիւլ-Խալիկ-բէյ, որոնք և կօժանդակէին Մուշի կառավարիչ սերէզցի Սէրվէթ-բէյին ու կը սկսին գործի։

Հայերը ջարդել-ջնջելու հրաման կը տրուի յունիս 28-ին, կիրակի օր։ Նախ կը սկսին կոտորել հայ այրերը՝ որը իր տան մէջ, որը իրենց գիւղին մէջ և որն ալ իր արտին մէջ. յետոյ կը հաւաքեն կիներն ու երախաները և զանոնք առանձին-առանձին շրջանակներու բաժնելով՝ կը տանին-կայրեն։

Այրուածներու գերեզմաններն ու խարոյկները կը գտնուին հետևեալ գիւղերու ու հետևեալ կեդրոններու մէջ.

1) Ջիարեթի շրջանակի 22 հայաբնակ գիւղերու կիներն ու երախաները, թուով 8600 հոգի, կը հաւաքուին, հսկողութեամբ կը տարուին Կենձի մօտերը, Արտուշէն ըսուած տեղը, ուր զանոնք կը ստիպեն կանգնիլ Եփրատի ափին, և մէկ-մէկ կը խշտեն ու կը նետեն ջուրը, ի հարկէ՝ ըստ ընդհանուր սովորութեան՝ իրենց անասնական կիրքը յագեցնելէ յետոյ։ Կըսուի թէ միայն գեղանիներէն 200 հոգի կը վերցնեն իբրև հարճ իրենց, իսկ մնացեալ բոլորն ալ կը սպաննեն. ասոնցմէ միայն մէկ կին ազատեր է՝ ինքզինքը խեղդուած ձևացնելով, և անցնելով գետին այս կողմի ափը՝ գիշերը կը փախչի և կուգայ ս. Կարապետի անտառի մէջ գտնուած փախստականներու քով և կը պատմէ վերոյիշեալը։ Ան կըսէ, թէ մի քանի կիներ ու երախաներ ալ, չկրնալով ճանապարհին երթալ, տեղն ու տեղը սպաննուեր են։

Կենձի, Ջիարեթի և Մուշի դաշտի արևելեան կողմի հայաբնակ գիւղերու երախաներն և կիներն այրելու գործողութիւնը յանձնուած է եղեր Կենձի մէջլիսին (երեսփոխան)՝ մուհաջիր Մէհմէդ էֆէնդիին։

2) Հերկերտի, Արասնի, Աւրանի, Զախաւի և Կուրաւի գիւղերու կանայք ու երախաները Աւրան կը քշուին իրենց անասուններով. բայց երբ մարտիկներու ուժը կը կոտրուի, գազանները 6300 հոգի կին ու երախայ կը լեցնեն Աւրանի եկեղեցին և կայրեն։

3) Աղջըմայ, Ալիճնայ, Ցարգերթու, Գոմսայ, Սուլուխայ, Խոփերու, Խաչխաշդաղի և Զրիկի կիներն ու երախաները, թուով 12,000, կառաջնորդուին ու կը լեցուին հինգ-վեց մարագ և ողջ-ողջ կայրուին։

4) Առինջ, Առինջվանք, Ցօղունք, Ցունան, Ցռօնք, Շեխերիմ, Շեխուսուֆ և Խարթաու գիւղերու կիներն ու երախաները, թուով 8000 հոգի, այրուած են Մուշի մերձակայ Ջափնայ գիւղի մէջ։

5) Կզըլաղաջ, Քիւրդ-մէյդան, Շիխլան, Ալազաղբիւր, Ցարթխօնք, Անձնուտ, Փողեկով, Խարօնկ, Քարձոր, Բէլել և Գոմեր գիւղերու ընտանիքները այրուած են կեառան ըսուած տեղւոյն մէջ, Մուշի դաշտի և Խլըթխանի սահմանին վրայ։ Այս տեղեկութիւնները տուող պաշտօնեաներէն մին ըսած է եղեր, թէ ինքն անձամբ այդ կոտորածի մէջ կը գտնուէր, «սիրտս կը կոտրէր, բայց ստիպուած էր համակերպիլ»։

6) Դերկիվանք, Մօկունք, Առաղ, Բերդակ, Նորշէն և Ցօրխնոյ գիւղերու ընտանիքները, թուով 6800 հոգի, այրուած են Առաղ գիւղի մէջ։ Պատմողներէն մին ալ այս կոտորածի մէջն է եղեր։

7) Սավառինչ, Խասգիւղ, Քօլոսիկ, Մէկրագոմ, Երշէր և Բնդխներ գիւղերու ընտանիքները, հաշուով 9000 հոգի, Խաս գիւղի մէջ այրուեր են։

Այս գիւղի մէջ այրած են նաև Մուշի առաջնորդական փոխանորդ Վարդան վ. Յակոբեանը՝ Մուշի ու դաշտի գիւղերու քահանաներու և Մուշի երևելի ազգայնոց հետ, թուով 4-500 անձ։

Աւզուտի, Ալիգլրուն, Մերանգոմի, Թլի, Ձխուրի, Աւազաղբիւրի, Դրմերտի, Արքավանքի, Արագայ, Արտօնայ կիներէն մաս մը, Ուշաամայ և այլ գիւղերու կիներն ալ Անդրուտ գիւղի ռէս Մալխասի տուներու մէջ այրեր են։ Թուով նորէն 8000-էն աւելի կըլլան եղեր ասոնք։

Մուշ քաղաքի կիներէն մաս մը, աւելի քան 2000, Սոխգոմի մէջ, նոյնպէս ալ Բէլել գիւղի մէջ այրուած են. այս վերջինները իբրև թէ Միջագետքի կողմերը ղրկուողներն են եղեր։

Մուշ քաղաքի կիներէն մաս մըն ալ՝ ըստ փախստական 10-ամեայ Եղիկեան Անուշի պատմածին, Արքավանք բերեր այրեր են։ Անուշը կըսէր. «Ես ինքս Արքավանքի մէջէն փախեր եկեր եմ, մօրս թելադրանքներու վրայ»։

Պատմող պաշտօնեաները ըսած են եղեր, թէ Տարօն-Սասունի մէջ, ուր որ հայ մը սպաննուեր է, կառավարութիւնը ցուցակագրեր է. այդ ցուցակագրութենէն կերևայ, որ կոտորուածներու թիւը եղած է 120,000. վերոյիշեալ շրջաններու կոտորուածներու թիւերը նոյն իսկ կառավարութենէն վերցուած է եղեր։

Այս մասսայական կոտորածներէ յետոյ է, որ կը ձեռնարկուի լեռներու խուզարկութիւններուն և փախստականներու հետապնդումներուն։ Դիւրէշ

Էջմիածին

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Տեղեկատու Զանգեզուրի

Գորիս, 6 դեկտ.

Կուլի, մեծ պատերազմի ստեղծած աննորմալ կացութիւնը օր-օրի վրա ծանրանում է գաւառիս գլխին։ Վերջին 4 ամսվայ ընթացքում իւրաքանչիւր շաբաթ կենսական մթերքները թանգանում են։ Չը կայ ցորեն, ալիւր. գիւղերը և Գորիսի շուկան մաքուր են այդ կողմից. մեծ է հացի կարիքը. սակայն ոչ մի յոյս և ակնկալութիւն չը կայ որևէ կերպ բաւարարելու այդ բացը։

Եղանակները այնքան պարզ և գուրեկան են, որ կատարեալ գարուն է տիրում։ Ղափանի ձորերում մի շարք վայրի ծառեր կոկոնել են արդէն։ Այսպիսի եղանակները, ինչպէս տարիների փորձերն են ցոյց տուել, վնասելու են դաշտավայրերի ցանքսերին։

Ցորենի պուդը պատահած դէպքում ծախվում է 3 ր. 60 կ., ռուսական ալիւրի մաքուր տեսակի մի քսակը ծախվում է 24—25 ռուբլով։

Ընտանի անասունների գինը ևս բարձրացել է. կով, ձի, ջորի, եզ անչափ թանգ գներով են ծախվում և եթէ այսպէս շարունակվի, գարնանը առասպելական գների կը հասնի եզան՝ հայ գիւղացու հարազատ եղբօր արժէքը։

Այսօրինակ շշմեցուցիչ դրութեան մէջ դպրոցական աշխարհը իր լուռ ու մունջ աշխատանքն է կատարում։ Բացառութեամբ 2—3 աղքատ և փոքր գիւղերի, միւսների դպրոցները՝ ժամը թէև քիչ ուշ՝ վերաբացվել են, և ուսումը կանոնաւորապէս առաջ է տարվում։ Թէև տարին ամեն կողմից անմխիթար ու պակաս է գաւառացու համար, սակայն դպրոցական մարմինները օրինակելի կերպով առաջ են տանում առ այժմ իրանց ստանձնած պարտականութիւնները։

Գորիսի կենտրոնական դպրոցի շինութեան պատերը բարձրացել են արդէն և ծածկվում է. եթէ եղանակներն այսպէս շարունակվեն մինչև մի ամիս, ծածկը ևս կաւարտվի։ Շէնքը վեհ և գեղեցիկ տպաւորութիւն է թողնում նայողի վրա, և իսկապէս քաղաքի առաջին շէնքը դպրոցը պէտք է լինի. գեղեցիկ, մեծ, յարմար և փարթամ։

Փառք ու պատիւ անյայտ բարերարին։ Սաղ—եան

—

Լուրեր Էջմիածնից

Էջմիածին, 11 դեկտեմբերի

Գէորգեան ճեմարանում մինչև այժմ զետեղված էին հիւանդներ. այս վերջին օրերս սկսել են նրանց տեղափոխել նոր վեհարանի շէնքը, այնպէս որ մինչև 10 կամ 12 օր ճեմարանը կը դատարկվի հիւանդներից։

Դասատուները բոլորը գտնվում են Էջմիածնում. տեղի են ունենում մանկավարժական ժողովներ. յոյս կայ, որ դասերը շուտով սկսվեն։ Աշակերտներից մէկը վարակվել է բծաւոր տիֆով, մնացածները թւով մօտաւորապէս 20—25 հոգի՝ ապրում են ճեմարանի հիւանդանոցում։

Եղանակներն առ այժմ լաւ են. սաստիկ ցրտեր չեն լինում։

Մթերքների թանգութիւնը նեղում է հասարակութեան։ Ս. Ե.

—

Հոգեհանգիստ Կարապետ եպ.-ի յիշատակին

Ախալքալաք, 7 դեկտեմբերի

Հայոց ազօթատանը ծխ. դպրոցի հոգաբարձութեան նախաձեռնութեամբ երեկ հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Կարապետ եպ.-ի յիշատակին։ Խօսեցին երկու ծխատէր քահանաները, լրացնելով իրար։ Նրանք որակեցին հանգուցեալին որպէս կուշտ մարդ, որը վեր էր սաւառնում ամեն մի խմբակցութիւնից։

Հաճելի տպաւորութիւն թողեցին քահանաների իմաստալից խօսքերը, որոնք, ի միջի այլոց, հայ ընթացիկ կեանքի վիրաւոր կողմերն էին շօշափում։ Ինի

—

Տաք հագուստեղէնի պակասութիւն

Աննէնֆէլդ, 24 նոյեմբերի

Տեղումս Քաղաքների Միութեան՝ գաղթականների համար բացած հիւանդանոցը, շնորհիւ հմուտ վարչական մարմնի, որին գլուխ է կանգնած բժ. Փիրումեանը, համարեա լիովին կատարել է իր վրա դրված պարտականութիւնը հնարաւորութեան սահմաններում։

Այժմ երբ ցրտերը սկսել են և առողջացածներին հիւանդանոցից պիտի արձակել, հագուստեղէնի խիստ կարիք է զգացվում, միանգամայն անկարելի է իրանց հագի ցնցոտիներով արձակել ու դրանով ապահովել ահագին խնամքով և մեծ մասամբ աղիքային հիւանդութիւններից առողջացածներին։ Եղել են դէպքեր, որ դրանցից շատերը հիւանդանոցից դուրս զուրկ լինելով բացի լաւ խնամքից, զուրկ նաև հագուստից, երկրորդ անգամ հիւանդացել են աւելի ծանր կերպով։ Թէև բժ. Փիրումեանը դիմել է Քաղաքների Միութեան կովկասեան կոմիտէին ու խնդրել, որ այդ պակասը ևս լրացվի, ուղարկելով շորեր, կօշիկներ և այլն՝ թէ հիւանդանոցիս և թէ շրջակայ գիւղերում ապաստանած գաղթականների համար, և այդ խնդիրը յարգվել է, բայց ըստ երևոյթին՝ Քաղաքների Միութիւնը չէ կարողանում այդպիսի բազմաթիւ դիմումները շուտով բաւարարել, որի պատճառով մեր հիւանդներից շատերին դժուարանում ենք հագուստ չը լինելու պատճառով արձակել հիւանդանոցից։

Ահա այդ չարիքի առաջն առնելու նպատակով, գաղթականներին օգնող ընկերութիւնների ուշադրութիւնն ենք հրաւիրում այս երևոյթի վրա ու խնդրում շուտով օգնել՝ ուղարկելով տաք շորեր, կօշիկներ կամ տրեխներ, գլխարկներ, անկողին և այլն։ Ինչպէս լսում ենք, վերոյիշեալ իրերի մեծ կարիք է զգացվում նաև շրջակայ մանաւանդ լեռնային վայրերում գտնված գիւղերի գաղթականների մէջ։ Այս րօպէիս հեռագրով հաղորդեցին մեզ, որ Գետաբէկում, որտեղ 500-ից աւելի գաղթականներ են տեղաւորված, բծաւոր տիֆը հետզհետէ սպառնալից չափերի է հասնում, որից վարակվել են գաղթականների հիւանդանոցի կին բժիշկը ու մի քանի այլ ծառայողներ, որով խնդրում են բժ. Փիրումեանին օգնութեան հասնել։ Այդ առիթով մենք յայտնեցինք հեռագրով Քաղաքների Միութեան կովկասեան բաժանմունքի լիազօր պ. Խատիսեանին, խնդրելով որ հարկ եղած օգնութիւնը հասցնէ։ Գառ-Նիկ

—

Խորէն աբեղայի կտակը

Սևան, 10 դեկտեմբերի

Ամսիս 5-ի գիշերը կեանքին վերջ տուեց կախելով իրան Սևանի մենաստանի 27 տարվայ միաբան Խորէն աբեղայ Մխիթարեանը 58 տարեկան հասակում։ Պատճառը յայտնի չէ։

Հանգուցեալը թողել է կտակ, գրված 1914 թ. նոյեմբերի 12-ին, որտեղ ասում է, որ ինքը ունի 500 ր., որը պահել է տրված արքունի խնայողական դրամարկղում սկսած 1913 թ. ապրիլի 4-ից։ Այդ դրամը պիտի մնայ այնտեղ անձեռնմխելի 10 տարի, որպէսզի ծերութեան օրերին հանի և գործածի իր պէտքերի համար։ Իսկ եթէ այդ 10 տարվայ ընթացքում ինքը մեռնի, այն դէպքում կը կամենար, որ իր դրամագլուխը իր տոկոսներով գործ դրվի Սևանի Առաքելոց մեծ վանքի վերանորոգութեան համար, իսկ եթէ մինչև իր մահը յիշեալ վանքը նորոգված լինի այլոց միջոցներով, այդ դէպքում ցանկանում է իր դրամը իր տոկոսներով թողնել Էջմիածնի «Դպրոցական ֆոնդին»։ Ապա ասում է. «Իմ այս կտակի կատարումը և դրամագլխի ստանալու իրաւունքը խոնարհաբար յանձնում եմ Վեհ. Կաթողիկոսին և Սինօդին»։ Մ.

ՕԼԹԵՑԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԸ

—

Թիֆլիսից «Рус. Сл.»-ին հեռագրում են դեկտեմբերի 4-ից.

«Օլթիում, կորպուսային երկրորդ դատարանում, սկսվեց Օլթիի շրջանի 20 բնակիչների գործը, որոնք մեղադրվում են պետական դաւաճանութեան մէջ։

«1914 թ. դեկտեմբերին, երբ թիւրքական զօրքերը Օլթին գրաւելով շարժվեցին դէպի Մերդենէկ և Բարդուս, դատապարտեալները, մեղադրական ակտի ասելով, անցան թշնամու կողմը և մտան չետաների շարքը։ Նրանք կատարում էին առաջնորդների դեր և աջակցում էին թշնամուն կեր, ուտեստի մթերքներ և փոխադրական միջոցներ գտնելու։

«Դրանցից մի քանիսը թիւրքերից ստացել են զէնք և մասնակցել ռազմական գործողութիւններին ընդդէմ ռուսների։

«Դատապարտեալները բոլորն էլ մուսուլմաններ են։ Նրանց յայտնվեց մեղադրանքը այն յօդուածներով, որոնք սահմանում են մահվան պատիժ։

«Դատարան կանչված են մօտ 100 վկայ»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ, ցերեկվայ ժամը 1-ին Թիֆլիս եկաւ գերիների դրութեան առանձին արտակարգ քննիչ յանձնաժողովի նախագահ սենատոր Կրիվցովը։

◆ Երկար բանակցութիւններից յետոյ, վերջապէս, պոլիտեխնիկումը կառուցող յանձնաժողովը համաձայնութեան եկաւ տեղական բանտային վարչութեան հետ, որ պոլիտեխնիկումի հողային աշխատանքները կատարեն բանտարկեալները։ Իւրաքանչիւր խորանարդ սաժէն աշխատանքի համար որոշված է տալ 5 ր. 90 կ.՝ փոխարէն 4 ռուբլու, որ տրվում էր պատերազմից առաջ։ Բանտարկեալները այսօրվանից սկսելու են աշխատանքները։ Հողային աշխատանքները ընդամէնը մօտ 1000 խորանարդ սաժէն են։

◆ Թիֆլիսի պոլիտեխնիքական ինստիտուտը կառուցող գլխաւոր կոմիտէի գըլխաւոր յանձնաժողովը որոշել է կոմիտէի նախագահ Ն. Լ. Պետերսոնին, նրա հեռանալու առիթով, ներկայացնել շնորհակալութեան մի ուղերձ իր կրած նեղութիւնների և երկրի իղձի իրականացման գործին նպաստելու համար։

◆ Երկուշաբթի օրվանից քաղաքային վարչութեան անդամներն սկսեցին էլեկտրաքարշի և նրա ամբողջ ինվենտարի ընդունելութիւնը ցուցակագրութեամբ։ Ընդունելութեան գործը կը տևի մօտաւորապէս մի շաբաթ։

◆ Սեդրաք Մանդինեանի մահվան առիթով Մոսկվայից բժիշկ Սիմոն Շահ-Նազարեանից ստացանք հետևեալ հեռագիրը. «Մեռաւ Սեդրաք Մանդինեանը, հանգաւ արևը, որ գիտական մանկավարժութեան շողերով լուսաւորում էր մեր դպրոցների դժուարին ուղին. ցամաքեց կարկաչուն աղբիւրը, որ տասնեակ տարիներ կենարար թարմութեամբ ոռոգում էր մեր հասարակական անդաստանը. կանգ առաւ հանգիստ չիմացող քննական թափանցիկ միտքը, որ բացեց գիտակցական կամքի նոր ուղիներ։ Պատմութեան յաւիտենականութեան անցաւ անվիճելի մի խոշոր անհատականութիւն։ Հանգիստ քո աճիւնին, թանկագին Սեդրաք»։

◆ Քաղ. դուման երկուշաբթի օրվայ իր նիստում հաստատեց քաղ. տնտեսական յանձնաժողովի որոշած սակագինը մսի, հացի և ուրիշ կենսական մթերքների վերաբերմամբ, որպիսի սակագնի մասին մենք հաղորդեցինք մեր թերթի անցած №-ում։

◆ 7-դ թաղամասի պրիստաւի օգնական Ջիքեյձվիլի Նիկոլաեւսկայա և Չերքեզովսկայա փողոցների անկիւնի մի խանութում գտել է պահված 200 պուդից աւելի շաքար, որը պէտք է ծախվի ոստիկանական թաղամասում։

◆ Դեկտեմբերի 14-ին Թիֆլիսում ստացվեցին հետևեալ մթերքները. ալիւր 28 վագոն, ցորեն 2 վ., սագ 1 վ., ձու 88 պ., միրգ 2 վ., գարի 2 վ., մազութ 10 վ., նաւթ 3 վ. և գինի 3 վագոն։

◆ «Journal Asiatigue» հանդէսի մէջ տպագրված է Ա. Սարուխանի «Հայկական խնդիրն և ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում» գրքի մասին մի ընդարձակ քննադատական յօդուած։

◆ Ստացանք Թիֆլիսում հրատարակվող «Պայքար» թերթի № 2-ը։ № 1-ը չենք ստացել, որպէսզի կարողանայինք մի քանի խօսք ասել մեր ընթերցողներին թերթի ուղղութեան և հայեացքների մասին։

◆ Դեկտեմբերի 28-ից մինչև յունվարի 5-ը Մոսկվայում կը կայանայ ժողովրդական թատրոնների ներկայացուցիչների համառուսական համագումարը։ Տեղիս ժողովրդական Տան Դրամատիկ Խմբակցութեան կողմից իբրև ներկայացուցիչ համագումարին մասնակցելու է դերասան Ամո-Խարազեան։

◆ Իրաւաբան Գ. Դօլուխանեան հարց է յարուցել դումայում, որ Սօլօլակի թոնելը օգտագործվի հետիոտն ճամբորդների համար, քանի որ նա առ այժմ չի գործադրվում էլեկտրաքարշի համար։ Թոնելը ճանապարհի յարմարեցնելը կը նստի, իրաւաբանի կարծիքով, 5000 ռուբլի։

◆ Զինուորներին ծննդեան ընծաներ ուղարկելու համար Թիֆլիսում կազմված «կինեմատօգրաֆների օրը» զուտ արդիւնք է տուել մօտ 500 ր., «վարսավիրների օրը» մօտ 400 ր., նոյն նպատակով Վոլժսկո-Կամսկի բանկի ծառայողները պատրաստել են ընծաներ 150 տոպրակ, Թիֆլիսի Կօոպերատիվը պատրաստում է 300 տոպրակ և այլն։

◆ Թիֆլիսի նահանգի դպրոցների շրջատեսուչ Վ. Միխայլովը ներկայումս այցելում է հայ ծխական դպրոցները և ներկայ է լինում ռուսաց լեզուի և այդ լեզուով դասաւանդվող առարկաների դասերին, իր դիտողութիւնները արձանագրելով դպրոցական յատուկ մատեաններում։

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Ամսիս 13-ին կայացաւ Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու ծխական ժողովը նախագահութեամբ բժշկապետ Բ. Նաւասարդեանի և ապա Գէորգ ա. ք. Մեհրաբեանի՝ հաստատելու նոյն եկեղեցու երէցփ. Վ. Ռ. Աւանեանի տասնամեայ հաշիւները և գործունէութիւնը, որի մասին նախապէս տպագրված էր տեղեկագրով և բաժանված ժողովրդին։ Ծխականները, ծանօթացած լինելով նախապէս տեղեկագրի հետ, թեր և դէմ խօսակցութիւններից յետոյ, ձայների անհամեմատ առաւելութեամբ հաստատեցին թէ երէցփոխի տասնամեայ հաշիւները և թէ տան շինութեան հաշիւները։ Ժողովը շնորհակալութիւն յայտնեց թէ երէցփոխին և թէ շինարարական հոգաբարձութեան, իրանց արիական և անշահասէր գործունէութեան համար»։

◆ Այս օրերս Պարսկաստանից Թիֆլիս կը ժամանի ասորիների պատրիարքը, որը ժամանակաւորապէս կը տեղաւորի սինօդական տան մէջ։

◆ Թիֆլիսի ուղղափառ հոգևոր սեմինարիայի վերատեսուչ Մելխիսեդեկ վարդապետը նշանակվում է Կրոնշտադտի եպիսկոպոս։

—

ՌՈՒՍԻԱ

◆ Պետրօգրադից հեռագրում են «К. Т.»-ին. «Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Իգնատիեվը բիւջէտային մասնաժողովում յայտնեց, որ Թիֆլիսի պօլիտեխնիկումի հարցը վճռվել է դրական մտքով։ Նրա իրականացումը յետաձգված է ներկայ հանգամանքների պատճառով։ Պօլիտեխնիկումի կանոնադրութիւնը կը համաձայնեցվի համալսարանական կանոնադրութեան։

◆ Արդարադատութեան նախկին մինիստր Շչեգլօվիտօվը «День»-ի ասելով պատասխանելու է Թիֆլիսի դատաստանական պալատի նախկին նախագահին, որ խիստ քննադատել է Շչեգլօվիտօվի գործունէութիւնը Իր պատասխանի մէջ Շչեգլօվիտօվը պաշտպանում է ծայրագաւառային քաղաքականութիւնը, մանաւանդ այն միտքը թէ կովկասեան դատարանները պէտք է ազատ լինեն այլազգի տարրերից։

—

ՌՈՒՍԱՀԱՅՔ

◆ Մոսկվայից, Ստ. Մամիկոնեանից ստացված մի հեռագրից երևում է, որ հանգուցեալ մանկավարժ և գրական քննադատ Կարապետ Կուսիկեանի թաղումը տեղի է ունեցել երէկ Մոսկվայում։

◆ Կովկասեան զօրքի Կարմիր Խաչի լիազօր Գօլուբեվը գլխաւոր վարչութեանը տեղեկութիւններ է ներկայացրել Ատրպատականի, Ուրմիայի, Վանի և Իգդիրի շրջաններում գործող խմբերի մասին, Կարմիր Խաչի լազարէթը Թաւրիզում օրինակելի է. Վանի շարժական լազարէթը աջողութեամբ կռիւ է մղել վարակիչ հիւանդութիւնների դէմ։ Միւս տեղերում լազարէթների ծառայողները գործում են մեծ եռանդով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

IV

Քրիստոնէութեան միսիոնարական առաջին շրջանից, այսինքն առաքեալների ժամանակից, պատմութիւնն ասում է, որ իւրաքանչիւր քրիստոնեայ իր պարտքն էր համարում գործել իր կրօնը տարածելու համար։ Հեթանոս հեղինակներից մէկը—Celsus—նկարագրում է, թէ ինչպէս քրիստոնեայ արհեստաւորներ և ստրուկներ, հասարակ անուսում մարդիկ, ամեն տեղ իրանց խանութներում, գործարաններում, մանկանոցում և կանանոցում հետևողներ էին գրաւում իրանց հաւատքի համար։ Միսիոնարական այս եռանդը ընդհանրապէս պատկանում է երիտասարդ կրօններին, որոնք ձգնում են աշխարհի մէջ ճանաչվելու համար։ Այդ եռանդը քրիստոնեաների մէջ չէ մնացել, սակայն մահմեդականների մէջ նա դեռ կենդանի է։ Ասում են, որ «իւրաքանչիւր վաճառական, արհեստաւոր, զինուոր, պաշտօնեայ, Ղուրանի ուսուցիչ, ըմբիշ՝ մի-մի միսիոնարներ են»։ Եթէ նոյն իսկ ընդունենք, որ այդ կարծիքի մէջ որոշ չափազանցութիւն կայ, սակայն ընդհանուր առմամբ այսպէս է, որ մահմեդականը իր կրօնական պարտականութիւններից մէկը համարում է իր կրօնը կարելի եղածին չափ տարածելը։ Ի հարկէ այդ բանի մէջ դեր խաղում են նաև ոչ այնքան իդէալական շարժառիթներ. օրինակ՝ վաճառականը մտածում է և այն առատ եկամուտների վրա, որ կարող են բաժին հասնել եռանդուն պրօպագանդիստին. կարելի է շահել փող և միևնոյն ժամանակ մարգարէի հաւատարիմ ծառայողի անուն ստանալ։

Պարզ է, որ այդ պրօպագանդան շատ զօրաւոր ազդեցութիւն կունենայ. մտածենք միայն, թէ այդ տեսակ մի գործունէութիւն ինչ հետևանք կունենար, եթէ առաջ մղվէր քրիստոնէական հոգով։ Մի անգամ Լիվինգստօնը ոգևորված էր այդ խորհրդով, որ Աֆրիկան Քրիստոսի համար շահէ այս միջոցով. քրիստոնեայ ճանապարհորդներ, քրիստոնեայ պաշտօնեաներ և սպաներ, քրիստոնեայ առեւտրականներ պիտի գնային այդ սեւ աշխարհամասի ամեն կողմերով և վկայութիւն տային Քրիստոսի մասին. դա էր նրա կեանքի գեղեցիկ երազը՝ Աֆրիկայի անապատներում թափառած ժամանակ։ Այդպէս չեղաւ, բայց ուր որ այդ տեսակ միսիոնարական գործունէութեան փորձեր են եղել, ինչպէս օրինակ վերջին ժամանակները Արևմտեան Աֆրիկայի որոշ մասերում, ամենաւրեք հետևանքները շատ նշանաւոր են եղել։

Միսիոնարական գործունէութեան այս կերպը արտաքուստ այնքան էլ չէ երևում. դա առաջ է գնում հանդարտ, առանց աղմուկի, միսիոնարական կայարաններ չեն շինվում, միջոցները շատ պարզ են, քրիստոնէական միսիոնարական ընկերութիւնների ընդարձակ մեխանիզմին պէտք չը կայ. ամբողջ գործը անցնում է աննշմարելի կերպով, մինչև որ մի գեղեցիկ օր գիւղը կամ շրջանը ամբողջովին խմորված է լինում իսլամից։

Սիմէօնը հիանալի կերպով նկարագրում է մեզ համար, թէ ինչպէս է գործում այդպիսի մի վաճառական միսիոնար։ Սեամորթը կամ թխադէմը յուսահատական վիճակի մէջ է։ Նոր ժամանակը հասել է նաև նրան և նրա երկրին։ Նա զգում է սպիտակամորթ մարդու ահռելի գերազանցութիւնը։ Նա չը գիտէ ինչ անել և դժբաղդ է այս մեծ, անծանօթ ոյժերի դիմաց։ Բոլոր հին բաները կործանվում են։ Նրա կրօնը, նրա «կուլտուրան», նրա գիտութիւնը ոչ մի նշանակութիւն չունեն սպիտակ մարդու առջև, որ ամեն բան գիտէ և ամեն բան կարող է։ «Ի՞նչ պիտի լինի մեր վերջը»։ «Միթէ բոլորովին պիտի փչանա՞նք»։ Այդ ժամանակ այդ գիւղն է գալիս մահմեդական վաճառականը։ Իրիկվայ խաղաղ ժամերին՝ վշտացած բնիկը բացում է իր սիրտը մահմեդական ուսուցչի առաջ, և խորամանկ հաջին շատ բան է ասում նրան մխիթարելու համար։ Նա, այդ թխամորթ մարդը, պատմում է թխամորթներին մի ուրիշ մեծ իշխանութեան մասին, որը միացնում է ազգերին և նրանց միմեանց հետ կապում հաւատքի եղբայրական կապերով։ Նա շատ օրինակներով ապացուցանում է, որ սպիտակ մարդն էլ է վախենում այդ խորհրդաւոր զօրութիւնից։ Եւրօպական պաշտօնեաներից ոչ ոք չէ համարձակվում խառնվել նրանց կրօնական հարցերին։ Գիւղապետը հասկանում է դա. եթէ նա չէ կամենում մի կամազուրկ գործիք դառնալ սպիտակամորթ մարդու ձեռքում, այդ դէպքում նրա համար միայն մի միջոց է մնում ապաստան գտնել իսլամութեան մէջ, որը թխադէմ մարդու կրօնն է։ Այդ կերպով մարդ կարող է գոնէ կրօնը ազատել սպիտակ մարդու գերիշխանութիւնից։ Ուրեմն այդ բոլոր հին բաներից, որոնց սպառնում է նոր ժամանակը, մի մասը պահպանելու միակ հնարաւորութիւնը իսլամն ընդունելն է։ Սա է այն քաղաքական-ազգային շարժառիթը, որ այնքան յաճախ ճանապարհ է հարթում մահմեդականութեան համար։

Այսպիսով բնական ժողովուրդների մէջ աւելի և աւելի է տարածվում այն զգացումը, թէ իրանց իսկական տեղը մահմեդականութեան սահմանների մէջ է։ «Դուք մահմեդակա՞ն էք», հարցնում է քրիստոնեայ միսիոնարը։ «Դեռ ոչ,—լինում է յաճախ պատասխանը,—բայց շուտով կը լինենք»։

Ամենից առաջ հէնց այս ինքնավստահ, յաղթական ձևն է, որ մահմեդական միսիօնարը ազդեցութիւն է գործում բնական ժողովուրդների վրա։ Նա միևնոյն ժամանակ կարող է շատ քաղաքավարի և սիրալիր լինել, սակայն երբէք վիճաբանութեան մէջ չէ մտնում սևամորթի կրօնի նկատմամբ և չի էլ աշխատում գովել նրա առջև իր կրօնի առաւելութիւնները. դա իր արժանաւորութիւնից ցած մի բան է։ Միայն այն ժամանակ, երբ բնիկը հասկանում է այն արտաքին առաւելութիւնները, որ իսլամը տալիս է իր հետևողներին, միայն այն ժամանակ է նա ցոյց տալիս նրան այն կանոնները և արտաքին պատուէրները, որ անհրաժեշտ են, և սևամորթին մնում է միայն հետևել այդ կանոններին։

Ահա այսպիսով առաջ է գնում մահմեդականութիւնը մեծ զօրութեամբ, մանաւանդ բնական ժողովուրդների մէջ։

Հետևեալ յօդուածի մէջ մենք աւելի մանրամասն կանգ կառնենք այդ ծաւալման վրա և ցոյց կը տանք իսլամի ունեցած ազդեցութիւնը կրօնական և բարոյական տեսակէտից այդ ժողովուրդների վրա։

Մ. Դերձակեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Արքունական Թատրոն

Դեկտեմբերի 14-ին, երկուշաբթի, Հայ-Դերասանական Ընկերակցութեան հերթական ներկայացմանը Արտիստական թատրոնում խաղացվեց Իբսէնի «Դօկտոր Շտօկման» 5 արար. դրաման, թարգ. Ս. Հախումեանի։ Նախընթաց ներկայացման (Երուանդ Բ.) տապալումից յետոյ, այս ներկայացումը միանգամայն աջող էր թէ պիեսի ընտրութեան և թէ խաղի կողմից։ Թարգմանական լեզուն ներկայ ժամանակի համար հնացած է. ցանկալի է այդ շատ ուսանելի պիեսի նոր, աւելի աջող թարգմանութիւնն ունենալ։

Խաղը միանգամայն գոհացուցիչ էր։

Դերասան Աբէլեանը պիեսի հերոս դօկտոր Շտօկմանի դերում շատ մեծ հմտութեամբ և աջողութեամբ տուեց գաղափարական, ժողովրդի բարեկամի և նրա շահերի համար մարտնչողի տիպը։ Միանգամայն իր տեղումն էր թէ իր աջող արտաքինով և թէ խաղով պ. Սեւումեանը Պիտեր Շտօկմանի դերում։ Պ. Սեւումեանը այդ երեկոյ, իբրև դերակատար, շատ լաւ էր։ Ընդհանրապէս աչքի էր ընկնում, որ դերակատարները աշխատանք էին թափել ու լաւ սերտել ամեն ինչ՝ լաւ խաղի համար։ Պ. Ալիխանեանը լրագրի աշխատակցի դերում, իբրև գրականագէտ, չափազանց բուլվարային տիպ դուրս բերեց, մինչդեռ լրագրական գործիչները, թէկուզ իրանց գրիչը վաճառող, արտաքինով ամենևին չեն յիշեցնում բուլվարային պչրուհիներին... Միւսները—Ժասմէն, Ջաբէլ, մանաւանդ Ազեան—Նպաստեցին իրանց աջող խաղով ներկայացման աջողութեանը։

Հասարակութիւն սովորականից պակաս էր. աւելի շատ աշակերտներ կային։

Նանուս

Մ Ա Մ Ո Ւ Լ

Տեղական հայ օրաթերթը իր պատասխանի մէջ Տ. Նազարեանին, ճգնելով ցոյց տալ, թէ ինքը բնաւ չէ հալածել հակառակորդների ձեռնարկները, վերջապէս խոստովանում է, թէ նա պատրաստ է աջակցել հակառակորդների ամեն մի ձեռնարկին, լինի դա Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողով, թէ Հայկական Ընդհանուր Բարեգ. Միութիւն, թէ Նպաստամատոյց Ընկերութիւն և թէ Տ. Նազարեանի ճաշարան-ապաստարանը, «միայն այն պայմանով, որ նրանք չը դառնան մի-մի գործիք մանր ինտրիգանների ձեռքում, մի-մի օջախ դաւերի ու պառակտումի»։ Ապա նա յայտնում է, որ Տ. Նազարեանը չափից դուրս ռեկլամ է անում իր գործի շուրջը։

Ուրեմն, թերթը կամենում է՝ թէև կողմնակի կերպով՝ ասել, թէ երբ այդ հիմնարկութիւնները եղել են կամ են գործիք «մանր ինտրիգանների ձեռքում, մի-մի օջախ դաւերի ու պառակտումի»։

Յայտնի է, որ բոլոր այդ հաստատութիւնները դուրս են դաշնակցական խնամակալութեան շրջանից։ Եւ ահա ինչու նրանք համարվում են թերթի կողմից «գործիք մանր ինտրիգանների», որոնց մէջ պէտք է հասկանալ, ի հարկէ, և Նուպար-փաշային, որովհետև նա է Եգիպտոսի Հ. Բար. Միութեան ղեկավարը։ Իսկ, անշուշտ, այն հաստատութիւնները, որոնք վայելում են Դաշնակցութեան և Թիֆլիսի թերթի պաշտպանութիւնը, նրանք, ո՛հ, բնաւ գործիք չեն որևէ ինտրիգանի ձեռքում, նրանք բնաւ մի-մի օճախներ չեն դաւերի ու պառակտումի։ Յետոյ, չափից դուրս ռեկլամներ անելը թոյլատրելի է միայն այն հաստատութիւններին, որոնք դարձեալ վայելում են Դաշնակցութեան հովանաւորութիւնը։ Այսպէս, օրինակ, բոլորովին բնական է, երբ օրերով, ամիսներով, թերթը ամեն տեսակ ռեկլամ է անում դաշնակցական կամաւորներին, Սասունը կորստի ենթարկող Ռուբէններին, Փափազեաններին, նոյնիսկ Արամ փաշաներին, որոնք հազարաւոր հայ փախստականների կորստեան պատճառ դարձան, հռչակում է հերոս. այդ ամենը շատ բնական է, որովհետև ռեկլամ անելու իրաւունքը միայն Վ. բանդեաններին, Աւետիսեաններին է վերապահված, իսկ մնացեալները, օրինակ Տ. Նազարեան և այլք, երբ որևէ ռեկլամ են անում, դուրս են գալիս համեստութեան շրջանից։

Եւ ստիպված ես հազարերորդ անգամ կրկնել՝ փարիսեցինե՛ր, որ չէք տեսնում ձեր աչքում ցցված գերանը, իսկ ուրիշի աչքի շիւղն էք տեսնում։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳԻՐ

Վանեցի ՀՐԱՉԵԱՑ ԱՒԵՏԻՍԵԱՆԸ, որ երեք տարիէ ի վեր Ամերիկա էր, ասկէ երեք ամիս առաջ կը բնակէր Ամերիկայի Նօրթ-Սէնթ-Պօլ քաղաքը, հիմա ոչ մի տեղեկութիւն չկայ։ Կը խնդրուի իրմէ տեղեկութիւն ունեցողներուն կամ ծանօթներուն, որ իմացնեն իրեն, թէ իր մայրն ու եղբայրը կապրին Երեւանի մէջ և շատ նեղութեան մէջ են։ Մօր հասցէն՝ Эривань, Царская, 75.

—

Մուշի Բուլանըխ շրջանի Կոփ գիւղացի ՍԱՐԳԻՍԵԱՆ ՄՈՒՐԱՏԸ, 11 տարեկան, վերջին նահանջէն Մուսունից դուրս ելած ժամանակ կորել է։ Նրա մասին որևէ տեղեկութիւն ունեցողից խնդրվում է իմացնել հասցէով՝ Тифлисъ, Театральная, 2-й тупикъ, № 6, д. Тунибекова, Закару Мхитарову.

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր.	ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր.	երեկ.
№ 6 (արագ)	»	12 ժ. 8 ր.	ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Ջուլֆա	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Բորժոմ	3 ժ. 20 ր.	ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր.	ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր.	երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր.	երեկ.
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր.	առաւ.
	Ջուլֆայից —	8 ժ. 11 ր.	առաւ.
	Բորժոմից —	7 ժ. 25 ր.	առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Դուխիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԲԺԻՇԿՆԵՐԸ
Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12½ ժ. միզապարծութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—2½—3 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՅԵԱՆ—12—1 ժ. երեքշ., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—220

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կիրակի օրը, դեկտեմբերի 20-ին, հանդիսաւոր պատարագ պիտի մատուցվի հայկաթոլիկների մատուռի մէջ ի յիշատակ տարեդարձի Արդանուշի սոսկալի կոտորածի։ Պատարագից վերջ կը կատարվի հոգեհանգստի արարողութիւն նախագահութեամբ Սարգիս վարդապետի։

Այդ նահատակների մասին պէտք է խօսվի նաև պատշաճ դամբանական։ Պատարագը կը սկսվի առաւօտեան ժամը 11-ին։

927. 1—1

Դեկտեմբերի 8-ին Բագուից Թիֆլիս գալով

այստեղ

ԱՆՅԱՅՏԱՑԵԼ Է

ՅՈՎԱԿ ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍԵԱՆ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ, որ հիւանդ է եղել։ Նա Ալէքսանդրօպօլի գաւառի Ղարաբօու գիւղի բնակիչ է, մօտ 27 տարեկան, տեղը իմացողներին խնդրվում է յայտնել հետևեալ հասցէով՝ Станція Калтахчи (З. ж. д.), Оваку Галстяну.

924. 2—2

ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М·ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М·ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3,
ВЕРХНІЙ ЭТАЖЪ.
761. 50—15 (2-4)

ՀՐԱՒԷՐ

Նորին բարձր սրբազնութեան կարգադրութեան համաձայն՝ առաջիկայ կիրակի, դեկտեմբերի 20-ին, պատարագից յետոյ ժամը 12-ին, Ջղրաշէնի ս. Աստուածածին եկեղեցում նշանակված է

ԾԽԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ուստի եկեղեցու իրաւատու ծխականները հրաւիրվում են ժողովի։

Օրակարգի խնդիրներն են.

1. Հաշւետւութիւն եկեղեցու և դպրոցի 1911—1914 թ. թ.։
2. Նախահաշիւ դպրոցի 1915/16 և եկեղեցու 1916 թ.։
3. Ծխական ատեանի կանոնադրութիւն։
4. Բարեփոխումն քահանաների գանձանակդրամի։
5. Սարկաւագի խնդիր։
6. Ընտրութիւն երէցփոխի, 4 հոգաբարձուների, 2 անձնափոխանորդների և հաշւետեսների։

ԱԶԴ.—Ծխական նոր կանոնադրութեան 14-րդ յօդուածի համաձայն՝ ժողովը կանոնաւոր է համարվում առաջին իսկ անգամ, որքան էլ լինի իրաւատուների թիւը։

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

(Հ. 2.) 922. 3 1

12 КНИГЪ. ОТКРЫТА ПОДПИСКА 7 руб. ВЪ ГОДЪ
на 1916 годъ.
(4-й годъ изданія)
НА ЕЖЕМѢСЯЧНЫЙ ЛИТЕРАТУРНЫЙ, НАУЧНЫЙ И ПОЛИТИЧЕСКІЙ
ЖУРНАЛЪ
„СѢВЕРНЫЯ ЗАПИСКИ",
издаваемый въ Петроградѣ.
—
Въ 1916 году журналъ будетъ издаваться по прежней программѣ и при участіи прежнихъ сотрудниковъ въ отдѣлахъ художественной литературы (беллетристика, стихи), литературной критики, искусства, театра, науки, философіи, религіи, политики, народнаго хозяйства.
ПОДПИСНАЯ ЦѢНА на журналъ
съ пересылкой на годъ 7 р., на 6 мѣс. 4 р., на 3 мѣс. 2 р. 25 к., за границу на г. 10 р. ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ главной конторѣ журнала: Петроградъ, Загородный пр., 21, въ крупныхъ книжныхъ магазинахъ и во всѣхъ почтовыхъ учрежденеіяхъ.
Книжные магазины за комиссію удерживаютъ 5%.
Отдѣльные номера для ознакомленія высылается по 60 коп., наложеннымъ платежомъ 75 к.
(2.2.) 911. 4—2 Издательница С. И. ЧАЦКИНА.

Нива
Еженедѣльный иллюстрированный журналъ,
ОТКРЫТА ПОДПИСКА НА 1916 г.
ПОДПИСЧИКИ ПОЛУЧАТЪ:
52 №№ журнала: повѣсти, разск., картины, рисун. въ краск., иллюстраціи съ театра военн. дѣйствій.
52 КНИГИ, отпечатаныя четкимъ шрифтомъ, въ которыя войдетъ:
12 КНИГЪ ЕЖЕМѢСЯЧН. ЖУРНАЛА „ЛИТЕРАТУРНЫЯ И ПОПУЛЯРНО-НАУЧНЫЯ ПРИЛОЖЕНІЯ".
40 книгъ „Сборника Нивы", содержащихъ:
ВТОРУЮ СЕРІЮ ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ
Д. Н. МАМИНА-СИБИРЯКА.
ПОЛНОЕ СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ
Н. Г. ГАРИНА-МИХАЙЛОВСКАГО.
НОВЫЯ посмертныя сочиненія А. П. ЧЕХОВА.
Романъ Шарля Де-Костера: „БИБЛІЯ БЕЛЬГІИ" („Уленспигель"
2 новыя спец. карты театра воен. дѣйствій двухъ фронтовъ: западнаго (русскаго) и западно-европ., подъ ред. проф. Ю. М. Шокальскаго,
12 №№, Ежемѣсячныхъ новѣйшихъ модъ",
12 листовъ выкроекъ и рисунк. рукодѣльн. работъ.
1 „ОТРЫВНОЙ ЕЖЕМѢС. КАЛЕНДАРЬ" на 1916 годъ
ПОДПИСНАЯ ЦѢНА «НИВЫ» со всѣми приложеніями на годъ:
Въ Петроградѣ | Безъ доставки 8 р. 50 к. | Съ доставкою 9 р. 50 к. | Съ перес. по всей Россіи 10 р. | Допускается разсрочка.
Новые подписчики, желающіе получить первую серію (18 кн.) Мамина-Сибиряка, доплачиваютъ 3 р. 50 к., съ перес. въ Европ. Россіи.
Адресъ: Въ Контору журнала „НИВА", Петроградъ, улица Гоголя, № 22.
(2.) 903. 4—2

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.